ՔՊ-ական սբրոդը բուռն ու երկարատեւ ծափերով է ողջունում վարչապետի ամեն շարժումը՝ եկեղեցի մտնել, եկեղեցուց դուրս գալ, մորուք պահել, սափրվել, հող հանձնել, թշնամու առաջ ծնկի գալ, սուտ խոստումներ տալ, խոստումները չկատարել... Բարձր ամբիոններից հայհոյանքներ է տալիս՝ դա էլ են անգամ ողջունում ծափերով:

Կարդացեք՝ էջ 5

Կարեն Լազարյանը մեզ ասաց, որ քոլեջի տնօրենի ԺՊ Արմինե Կոլյանն իրեն չի տրամադրում համապատասխան փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են հնգամյա զարգացման ծրագիր կազմելու համար, քանի որ կառավարության որոշմամբ հաստատված՝ մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններից մեկը 5 տարվա զարգացման ծրագիր ներկայացնելն է:

Կարդացեք՝ էջ 7

Համայնքի վարչական ղեկավարը զանգեց, ասեց, որ հաշվառում են անում ասբեստի համար: Ճիշտ է՝ մենք էլ տանիքի խնդիր ունեինք, բայց մեր տվյալները չտվեցինք: Պետությունը փող ծախսելու տեղ չունի՞, ընկել ա՝ գյուղերի օժանդակ շինությունների տանիքներն ա փոխում: Հասկացանք, որ քաղաքական առումով են օգտագործելու:

Կարդացեք՝ էջ 8

Հրապարակ

Hraparak daily newspaper
4/41 Mashtoc St.
0010 Yerevan, RA
tel.52 66 70
info@hraparak.am

ISSN 1829-2372

ՕՐԱԹԵՐԹ, 200 դրամ

N 38 (4173), 13 մարտ, ուրբաթ, 2026

www.hraparak.am

ՔՊ-ն այս շաբաթ ներկուսակցական քարոզարշավի անվան տակ կարշավի Վայոց Ձոր եւ Սյունիք, իսկ եզրափակիչ արշավը նախատեսում են իրականացնել գալիք շաբաթ, Երեւանում: ՔՊ-ական աղբյուրները չեն թաքցնում իրենց թախիծը՝ որ Երեւանում անմխիթար վիճակում են եւ նոր հնարքներ են մտածում՝ ինչ անել, որ թաղերով, բակերով անցնելիս չխայտառակվեն: Բանն այն է, որ Երեւանում ՔՊ-ի վարկանիշը մարզերի համեմատ շատ ավելի ցածր է: Եվ եթե մարզերում չկարողանան խուսափել տհաճ պահերից, պատկերացնում են, թե մայրաքաղաքում ինչ է կատարվելու: Իսկ Երեւանում է հիմա ընտրողների 2/3-ը, եւ երեւանցիների ձայնն է վճռորոշ լինելու այս ընտրություններում: Ուստի, եթե մարզերում Նիկոլ Փաշինյանը դեռ կարող էր մուննաթ գալ, գոռալ մարդկանց վրա, «կուկուռուզ ու պեռաշկի» ուտել, ապա Երեւանում նման պահվածքը կարող է թանկ նստել իրենց վրա: ՔՊ-ից մեզ վստահեցրին, որ դեռ հայտնի չէ երեւանյան քարոզարշավի սցենարը: Գիտենք, որ մարտի 27-28-ին ՔՊ ներկուսակցական ընտրությունների երկրորդ փուլն է լինելու՝ 50 հոգու ցուցակն են դասավորելու՝ 1000 պատվիրակների քվեարկությամբ, իսկ ապրիլի 4-5-ին համաժողով կանեն եւ կհաստատեն արդեն կազմված 50-յակի ցանկը:

Դիլիջանի Կամոյի փողոցում, միջպետական ճանապարհի եզրին սնկի վաճառքի կետ կա: Ծառի սնկի սեզոնին այստեղ վաճառվում է անտառի ծառի սունկ, մյուս ժամանակները՝ շամպինիոն եւ աճեցրած ծառի սունկ: Մնկի վաճառքի կետը պատկանում է մոտակայքում խանութ ունեցող դիլիջանցուն, որը ոչ թե իր խանութում է վաճառում սունկը կամ խանութի առաջ, այլ՝ փողոցի մյուս կողմում: Համայնքապետարանը մի անգամ 100 հազար դրամով տուգանել է սնկի անօրինական վաճառքի համար, սակայն նա շարունակում է սնկի վաճառքը: Դիլիջանի բնակիչները պատմեցին, որ ամեն անգամ, երբ Նիկոլ Փաշինյանը Դիլիջան կամ Իջեւան է այցելում, այստեղ վաճառվող սունկը հավաքում են, իսկ նրա գնալուց հետո սնկի վաճառքը շարունակվում է:

Տավուշի մարզի Բերդ համայնքից հայտնում են, որ թեեւ ոչ մեծ թափով, սակայն արտագաղթ է վերսկսվել, հիմնականում՝ դեպի Ռուսաստան: Եթե նախկինում գնում էին աղքատ ընտանիքները, ապա հիմա արտագաղթում են կայացած, ֆինանսապես ապահովված մարդիկ: Նրանք չեն հավատում Փաշինյանի իշխանության պարագայում Հայաստանի պայծառ ապագային, բայց մարդիկ վստահ են, որ արտագաղթի ալիքը մոլեգնելու է, եթե հունիսին ՔՊ-ն վերարտադրվի:

Զրկել այդ իրավունքից

Չկա օր, որ պետության առաջին դեմքը որեւէ խնդրահարույց, սադրիչ հայտարարություն չանի, որով հայի ազգային արժանապատվությունն է ոտնահարում, արցախցիների շահերին, մեր պետությանն անդառնալի վնասներ հասցնում: Նրա հայտարարություններն ինչ-որ պահից այլեւս հայկական պետության եւ հայ ժողովրդի շահերը չեն արտահայտում. ում շահերն ասես արտահայտում են՝ ԱՄՆ-ի, եվրոպական երկրների, Ուկրաինայի, Վրաստանի, մեր հարեւան Ադրբեջանի ու Թուրքիայի, բայց ո՛չ Հայաստանի: Նա երկրի ներսում անթիվ-անհամար թշնամիներ է վաստակել, իսկ երկրից դուրս բարեկամներ է փնտրում՝ իր վերարտադրության հույսը կապելով օտարների հետ, որոնց աջակցությամբ փորձելու է իրեն պարտադրել ՀՀ հասարակությանը, որ հետագա հինգ տարիների ընթացքում էլ շարունակի հակահայկական հայտարարություններ անել, ի վնաս Հայաստանի շահերի գործել ու կրկին քողարկվել «ես լեգիտիմ ընտրված իշխանություն եմ» արտահայտության տակ: Չէ՞ որ այս արտահայտությամբ է հիմնավորում «Արցախն Ադրբեջանի մաս է կազմում», «արցախցիները չպետք է վերադառնան իրենց հայրենիք» ասելու իր իրավունքը: Նաեւ ցեղասպանության եւ Արցախի մասին խոսող Ցեղասպանության թանգարանի տնօրենին է ազատում աշխատանքից, թե «Հայաստանում չի կարող երկու արտաքին քաղաքականություն լինել», ինչը բացահայտորեն նշանակում է, որ ընտրվելուց հետո փակելու է այդ թանգարանը, հողին է հավասարեցնելու Ծիծեռնակաբերդի հուշահամալիրը, արգելելու է ապրիլի 24-ին հիշատակի միջոցառումները, «Արցախ» անունը հիշատակողներին բացահայտորեն պատժելու է, մեր պատմությունից ջնջելու է արցախյան հաղթանակի, պատերազմների, Արեւմտյան Հայաստանի մասին հիշատակումները: Եվ ամեն անգամ, երբ դուք փորձելու եք առարկել, ասելու է՝ ես լեգիտիմ իշխանություն եմ, իրավունք ունեմ դա անելու:

Նախկին ՀՀԿ-ական, ներկայում Աննա Հակոբյանի ընկերուհի Աննա Դավթյանը, որ նախօրեին տիկնոջ հետ Արմավիրում խնջույքի է մասնակցել եւ պարելու լուսանկարներ հրապարակել, իր մերձավոր շրջապատում հայտարարել է, որ խորհրդարանական ընտրություններից հետո իրեն են նշանակելու ԿԳՄՍ նախարար: Դավթյանը ներկայում Երեւանի Սամվել Գեւորգյանի անվան թիվ 189 ավագ դպրոցի տնօրենն է: Նա Աննա Հակոբյանի «Կրթվելը նորաձեւ է» արշավի ակտիվ մասնակիցներից է: Նրա պաշտոնավարման ժամանակ էր Սիլվա Կապուտիկյանի անվան թիվ 145 դպրոցում աշխատանքը կորցրել այդ ժամանակ պատմության ուսուցիչ աշխատող լրագրող Կարպիս Փաշոյանը: Ըստ լուրերի՝ նա տիկնոջ ընկերուհին է դարձել «Իմ քայլը» հիմնադրամի փոխտնօրեն Թալին Թոփալաքյանի հետ մտերմության շնորհիվ, եւ վերջինս էլ լոբբինգ է անում Դավթյանի հարցում: Այս ամենը նաեւ այն մասին է խոսում, որ տիկին Հակոբյանը չի կորցրել Փաշինյանի կադրային քաղաքականության վրա ազդելու լծակները:

ԹՐԻՓՓ-Ը ԳՐՎԵՑ ՍԱՌՈՒՅՑԻՆ

Մինչ «Գեւորգ Պապոյան եւ մյուսներ» իշխանական անսամբլը վերջին շրջանում 24/7 ռեժիմով ագրեսիվ քարոզչություն է անում, թե եթե ՔՊ-ն չլինի, TRIPP-ը չի լինի, հետեւաբար, խաղաղություն չի լինի, Հայաստանը կդառնա ծայրագավառ, ու ընտրողին մոլորեցնում են, թե Հայաստանի անվտանգության հարցն առնվազն 99 տարով լուծված է, քանի որ ամերիկյան ընկերությունը 99 տարով վարձակալել է Հայաստանի 41 կիլոմետրանոց տարածքը, որտեղով պետք է անցնի Թրամփի ուղին, երեկ Նիկոլ Փաշինյանը սառը ցնցուղ լցրեց իր թիմի ու իրենց հավատացողների գլխին՝ ակնարկելով, որ TRIPP-ի աշխատանքները ժամանակավորապես կարող են հետաձգվել: Ավելի պարզ ասած՝ այդ ճանապարհի կառուցումն իրենց ձեռքում չէ, ԱՄՆ-ն ոնց ուզի, այնպես էլ կլինի: Իսկ Իրանի կոնֆլիկտը փոխել է իրավիճակը մեր տարածաշրջանում: Կառավարության երեկվա նիստից հետո՝ բրիֆինգում Փաշինյանը բառացի ասաց, որ «Թրամփի ուղին» ԱՄՆ վարչակազմի առաջնահերթությունների մեջ չէ այս պահին՝ Իրանի շուրջ կատարվող իրադարձությունների պատճառով: «Տեսնում եք՝ ինչ է կատարվում, ու ինչով են իրենք հիմա զբաղված: Ցավոք, հավանականությունը մեծ է, որ պրոցեսների վրա ժամանակի առումով կազդի: Հիմա ԱՄՆ կառավարությունը կենտրոնացած է այլ խնդրի վրա: Իհարկե, եթե պարզվի, որ չի ազդի, ավելի լավ»,- ասաց նա՝ գուժելով, որ խաղաղության փուչիկը պայթել է: Թերեւս, նաեւ սա է պատճառը, որ ամբողջ ուժով հումանիտար միջանցք են առաջարկում Ադրբեջանին:

ԴԵՄ ԵՄ

ԵՍ ԻՆՉՊԵ՞Տ ՄԵԿՆԱԲԱՆԵՄ ԱՅԴ ԶԱՌԱՆՑԱՆՔԸ

«Հրապարակի» զրուցակիցը հասարակական, քաղաքական գործիչ, «Բոլորին դեմ եմ» քաղաքական նախաձեռնության անդամ **Միքայել Նահապետյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը Եվրախորհրդարանում հայտարարեց, որ արցախցիներն ընդմիշտ պետք է մոռանան Արցախ վերադառնալու մասին եւ առհավետ տնավորվեն Հայաստանում: Խոսեց այն մասին, որ իր դեմ պայքարող հոգեւորականները ԿԳԲ-ի գործակալներ են, հայտարարեց, որ պատրաստ է Ադրբեջանին հումանիտար միջանցք տալ, նորից շնորհակալություններ հայտնեց Բաքվի բռնապետ Ալիեւին: Ըստ Ձեզ՝ ինչ հայտարարություններ էին դրանք, եւ ո՞րն էր դրանց նպատակը:

- Նիկոլ Փաշինյանը մեծ նախընտրական հյուրախաղը սկսել է, նրա բոլոր այցերը, հայտարարությունները, նրան ուղղված ծափահարություններն ու սրտիկները նվիրված են նախընտրական հյուրախաղերին, ով ինչով կարողանա, օգնելու է, որպեսզի նա վերընտրվի: Փաշինյանն իր ելույթներով հասկացնում է, թե ինչպես է ընտրություններում հաղթանակ տանելու, իսկ հետընտրական զարգացումները լինելու են բավականին կոշտ՝ իբրեւ կանխարգելելու նպատակով: Նրա հայտարարությունների տողատակերում ես դա եմ տեսնում:

- Իսկ ադրբեջանասիրական հայտարարությունները, արցախցիներին թեւաթափ անող կոչերն արդյո՞ք նպաստում են նախընտրական շրջանում նրա վարկանիշի բարձրացմանը: Հայ ժողովուրդը շոյվո՞ւմ է, երբ Փաշինյանն Ալիեւին շնորհակալություն է հայտնում:

- Չի շոյվում ժողովուրդը, բայց նա ֆոն է ստեղծում, թե իբրեւ խաղաղություն է հաստատվել, իբրեւ տարածաշրջանում վիճակը կայուն է եւ այլն: Նիկոլ Փաշինյանն ուզում է բոլորին ցույց տալ, թե իբրեւ ինքն ինչին պատրաստ է, Հայաստանում բացառապես միայն ինքն է դրան պատրաստ, եւ, հետեւաբար, եթե այս պրոցեսները պետք են արտաքին խաղացողներին, ապա ինքը պետք է մնա իշխանության: Ակեղծ ասած, նա կարողանում է այդ խաղը լավ խաղալ եւ իր հայտարարություններով ցույց է տալիս, որ մի կողմում ինքն է, որն իր պատկերացումներով ադեկվատ է, եւ մյուս կողմում կան ուժեր, ովքեր խաղաղության պրոցեսից սկանդալ են սարքում ու չեն կարող լավ գործընկեր հանդիսանալ արտաքին խաղացողների համար:

- Ադրբեջանին անհատույց նախընտրական միջանցք տալը ճե՞ւ այդ տրամաբանության մեջ է:

- Ինձ համար այս ամենի տրամաբանությունն իրոք հասկանալի չէ, այն նման է փիառ արշավի, քանի որ Ադրբեջանն այս պահին իսկապես չունի այդ միջանցքի կարիքը:

- Կառավարության նիստից հետո կայացած բրիֆինգի ժամանակ էլ Փաշինյանը հայտարարեց, թե պատարագներից մեկի ժամանակ լսել է «Արցախի Հանրապետություն» եզրույթը, ինչը նշանակում է պատերազմի կոչ: Եվ ասաց, որ ինքն է ազատել Ցեղասպանության թանգարանի տնօրենին, քանի որ «պետությունում չի կարող երկու արտաքին քաղաքականություն լինել»:

- Ես ինչպե՞ս մեկնաբանեմ այդ զառանցանքը: Այդ մարդը պետք է որոշի՝ ՀՀ արտաքին քաղաքականությունն ի՞նքն է վարում, թե՞ ոչ: Եթե ինքն է վարում, ապա մնացած ոչ մեկի կարծիքը չի կարող բանակցային պրոցեսների մաս կազմել, իսկ եթե ինքը չի վարում, եթե դա իր բացառիկ իրավունքը չէ, ապա թող մարդկանցից վազն անցնի եւ քիչ սրան-նրան ստիպի՝ ազատման դիմումներ գրել: Այս մարդը պետք է ընտրի՝ իր պաշտոնական կարծիքն իրե՞նն է, թե՞ ՀՀ-ում ինչ կարծիք հնչեց, դա պաշտոնական է: Նա պետք է այս երկուսի միջեւ ընտրություն կատարի:

- Արտաքին հետախուզության ծառայությունը պնդում է, որ արտերկրից ստիպողաբար 80 հազար քաղաքացի են բերելու՝ ընտրություններին մասնակցելու համար, եւ դա քրեորեն պատժելի արարք է: Եթե այդ մարդիկ ՀՀ քաղաքացի են, ի՞նչն է խնդիրն այստեղ:

- Խնդիրը դիտարկվում է մարդկանց կազմակերպված Հայաստան բերելը, բայց ես չեմ պատկերացնում նման բան, տեխնիկապես անհնար է 80 հազար մարդու Հայաստան բերել: Եթե ՌԴ-ն լիներ այն պետությունը, որը կարողանար 80 հազար մարդու շարքով ինչ-որ կողմ տանել, ապա, հաստատապես, այդ ուղղությունը չէր լինի Հայաստանը, Ռուսաստանի համար կան շատ ավելի կարեւոր ուղղություններ….

- Ի՞նչ փուլում է «Բոլորին դեմ եմ» նախաձեռնությունը: Ինչո՞վ եք զբաղված այս շրջանում:

- «Բոլորին դեմ եմ»-ը այս պահին երկու ուղղությամբ է աշխատում՝ քաղաքացիների հետ կոմունիկացիա՝ ոչ օնլայն եղանակով, մարդկանց նամակներ ենք ուղարկում, գնում ենք նրանց հետ հանդիպումների, բակեր ենք գնում, մարդկանց հետ զրույցներ ենք ունենում եւ այլն: Մյուս ուղղությունն էլ այն է, որ նախընտրական ցուցակը լինի բաց հրապարակային ձեւավորված: Շարժման բոլոր անդամներն ունեն առաջադրման հնարավորություն, ինչպես նաեւ՝ քվեարկելու, որպեսզի կազմը ձեւավորվի: «Հիմնադիր» քաղաքական շարժման անդամների հետ արդեն լիարժեք համաձայնություն ենք ձեռք բերել, որ միասին ենք մասնակցելու ընտրություններին, իսկ հետո արդեն կքննարկենք հարցերը՝ երկարաժամկետ գործողությունների համար, ինչպես նաեւ՝ այլ փոքր քաղաքական ուժերի հետ ենք համագործակցում: Կա լավ երկխոսություն, տեսնենք, թե ինչ արդյունքի կհասնենք:

Էջը՝
Հայկ
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑ ԼՈՒԾԵԼՈՒ ՓՈԽԱՐԵՆ, ՈՒՇՔՆՈՒՄԻՏՔԸ՝ ԻՆՉ ՈՒՏԻ, ՈՒՄԻՑ ԲԱՄԲԱՍԻ

«Հրապարակի» զրուցակիցը **Տեր Վրթանես քահանա Բաղալյանն** է:

- Նիկոլ Փաշինյանը մարտի 11-ին Եվրապառլամենտում հայտարարել է, որ իրեն քննադատող հոգեւորականները ԿԳԲ-ի գործակալներ են, որ իբրեւ նրանք օտարի շահին են ծառայում, ամեն բան անում են, որպեսզի Հայոց պետականությունը ոչնչանա, եւ Հայաստանն անցնի օտարի կառավարման տակ եւ այլն: Ի թիվս այլ հայտարարությունների՝ Նիկոլ Փաշինյանը պնդել է, որ հոգեւորականների տարածած այն հայտարարությունները, թե Հայաստանը վերածվում է բռնապետության, որտեղ չկա խղճի ազատություն, իրականությանը չեն համապատասխանում: Այս հայտարարություններից հետո եվրոպացի պատգամավորները հոտնկայս ծափահարել են Նիկոլ Փաշինյանին: Ի՞նչ կարծիք ունեք նրա այս հայտարարության մասին:

- Փաշինյանի ամբողջ ելույթի ողջ նպատակը վերջում ծափահարությունների արժանանալն էր: Նա այդ ելույթի ժամանակ որեւէ կերպ առաջ չքաշեց մեր ազգային շահերը, համենայնդեպս՝ ես այդպես ընկալեցի նրա ելույթը: Նա, փոխանակ խոսեր արցախցիների իրավունքների մասին, փոխանակ խոսեր հայ ռազմագերիների վերադարձի մասին, խոսեց այն մասին, որ արցախցիները պետք է ընդմիշտ մոռանան Արցախ վերադառնալու հարցը: Մենք տեսնում ենք մի մարդու, որն իր ազգային շահերը բարձրաձայնելու փոխարեն հերթական անգամ խոսեց եւ ադրբեջանական շահն առաջ տարավ ու սկսեց դժգոհել ընդդիմությունից, սրանից դժգոհեց, նրանից դժգոհեց: Բագրատ սրբազանից է դժգոհ, ահագին զրպարտեց նրան, այս մարդը փաստացի չի էլ գիտակցում, թե ուր է գնացել: Հասել է Եվրախորհրդարան եւ այնտեղ եւս աջակիցներ է փնտրում՝ օտարների մեջ: Հավանաբար ակնկալում է, որ իրեն էլի ֆինանսավորեն: Էրդողանին, Ալիեւին հաճո հայտարարություններ արեց բացառապես: Նիկոլ Փաշինյանն ի վերջո այն պետական պաշտոնյան չէ, որը կարող է լուրջ հարցեր բարձրացնել: Նա հայ ազգին վերաբերող հարցերն իրեն օտար է համարում: Տպավորությունն է, որ նա Հայաստան գործուղված ինչ-որ մի դեսպան է, որը միայն հայտարարություններ է անում, սակայն գործնականում՝ ոչ մի քայլ: Երբ պահը գալիս է, որ ինչ-որ քայլեր պետք է արվեն, նա ձեռքերը լվանում է: Առնվազն 6-7 սրբավայր Արցախում ոչնչացվել է, ենթարկվել է վանդալիզմի, գոնե այդ մասին չխոսեց: Քանի՞ գերեզման են քանդել Արցախում ադրբեջանցիները, քանի՞ հուշարձան են պղծել: Այդ ամենից հետո խոսել ինչ-որ խաղաղության մասին, ասել, որ Հայաստանում ամեն ինչ կարգին է, դա նշանակում է խրոնիկ ստախոսություն: Այս մարդը վերածվել է խրոնիկ ստախոսի եւ ամենուր միայն սուտ է խոսում: Խաղաղությունից է խոսում՝ այն դեպքում, երբ 2025-ի ամռանն Ադրբեջանը Գեղարքունիքի եւ Ջերմուկի դիրքերում առաջխաղացում է ունեցել: Չես հասկանում, թե նա ում է հիմարի տեղ դնում, երբ արդեն հայկական բնակավայրերն են նշանառության տակ: Հայ ազգը Նիկոլի հետ չունի ապագա: Իսկ ինչ վերաբերում է եկեղեցականների հասցեին ինչեցված նրա գնահատականներին, ապա նա խրոնիկ ստախոս է եւ զրպարտում է հոգեւորականությանը: Մենք երբեք սահմանազատմանը դեմ չենք եղել, մենք դեմ ենք եղել եւ այսօր էլ դեմ ենք միակողմանի զիջումներին: Ադրբեջանը ստացավ գյուղեր, իսկ այն հայկական տարածքները, որոնք նույն Ադրբեջանն օկուպացրել էր, այդպես էլ մեզ չվերադարձրեց, այդ թվում՝ նույն Ջերմուկի հատվածից:

- Եթե Հայ առաքելական եկեղեցում, ըստ Փաշինյանի, գործակալներ են, ապա ինչո՞ւ հետ կանգնեց Եկեղեցու դեմ պայքարից:

- Հետ չի կանգնել, ուղղակի, քանի որ եկեղեցականների 90 տոկոսից ավելին, ինչպես նաեւ հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը դեմ էր հակաեկեղեցական այդ արշավին, անգամ իր աջակիցների մի մասն է դեմ եղել այդ արշավին, Փաշինյանը որոշել է նախընտրական այս փուլում կեղծավորաբար լռել եւ ոչինչ չանել, սակայն եթե իր բախտը բերի, իսկ հայ ազգի բախտը չբերի, եւ նա հանկարծ վերարտադրվի, ապա կրկին սկսելու է հակաեկեղեցական պայքար: Այս փուլում նա փորձում է մարդահաճո քայլեր անել, խանութում ինչ-որ արցախցի կնոջ է օգնում՝ գնումները տուն հասցնելու նպատակով, ցույց է տալիս, որ ինքն ընդամենը կարկանդակով է սնվում, հասարակ մարդ է, սոված ժամանակ կուկուռուզ է ուտում, բայց բոլորս էլ գիտենք, թե նա ով է եւ ինչ կյանքով է ապրում: Գնացել, հասել է գագաթնաժողովի, գոնե մի ազգային հարց լուծելու փոխարեն էլի ուշքնումիտքն այն է, թե ինչ ուտի, ումից բամբասի: ՀՀ բյուջեի հաշվին այս մարդը գնում է տարբեր երկրներ եւ ոչ մի օգուտ չի տալիս Հայաստանին, վնասից բացի, խոսում է բացառապես Ադրբեջանի շահերից ելնելով:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՏԱՎՈՐ Է ԴՐՍՈՒՄ ԱՊՐՈՂ ԻՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆՏՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՊԱՀՈՎԵԼ

Հունիսի 7-ի ընտրություններին ընդառաջ, Նիկոլ Փաշինյանը վարչական ողջ ապարատը ծառայեցնում է իր վերարտադրությանը, եւ այդ նպատակով տարատեսակ դավադրապաշտական սցենարներ են դաշտ նետվում ընդդիմադիր ուժերի, մասնավորապես, իշխանության գլխավոր մրցակից Սամվել Կարապետյանի ղեկավարած ուժի մասին: Իշխանական արշավին են միացել նաեւ սպասարկու ՀԿ-ներ, քաղաքագետներ, քաղհասարակություն կոչվածը:

Արտաքին հետախուզության ծառայության տարօրինակ հայտարարության թանաքը դեռ չչորացած՝ իրավական գործընթացի մեկնարկ է տրվել: «Անկախ դիտորդ» կազմակերպության ղեկավար Դանիել Իոաննիսյանը զարգացնում է իշխանության գծած պլանը: Հիշեցնենք. Արտաքին հետախուզության ծառայությունը հաղորդեց, թե իբր «այլ երկրում տվյալ երկրի հատուկ ծառայությունների անունից հանդես գալով՝ տարբեր դերակատարներ փորձում են ճնշում գործադրել հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող ու տվյալ երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ՝ վերջիններիս մղելով Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած քաղաքական որոշ ուժերին աջակցելու գործողություններ իրականացնելուն»: Ծառայությունը թեպետ չի նշել, թե որ երկրի մասին է խոսքը, ինչպես են պարտադրում, սակայն հայտարարությունից վայրկյաններ անց ՔՊ-ականները լայվեր արեցին եւ խոսեցին Ռուսաստանի մասին, որն իբր ուզում է Սամվել Կարապետյանի միջոցով Հայաստանում իշխանափոխություն իրականացնել: Հղում անելով իշխանության մեր աղբյուրներին՝ գրել էինք, որ իրականում Փաշինյանը ցայտնոտի մեջ է ընկել սոցհարցումներից, որոնք, մեղմ ասած, իր օգտին չեն: Զգում է, որ իշխանությունը փախչում է ոտքերի տակից, ուստի տարբեր սցենարներով մտադիր է Հայաստանում «մոլդովական սցենար» կիրառել, եւ երբ լրիվ անհույս կլինի իրենց ընտրվելը, որոշ ուժերի զրկել ընտրություններին մասնակցելու իրավունքից:

Արտաքին հետախուզության ծառայության հայտարարությունից հետո հայտնի դարձավ, որ Քննչական կոմիտեում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քաղաքացիների նկատմամբ գործադրվող ինչ-որ ճնշումների եւ սպասվող ընտրական գործընթացներին միջամտության վերաբերյալ: Իբր փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ «Հայաստանի քաղաքական դաշտում գործունեություն ծավալող որոշ կուսակցությունների ղեկավարների, պատասխանատուների կամ այլ դերակատարների կողմից, նյութապես շահագրգռելու եղանակով, խոչընդոտվում է անձանց ընտրական իրավունքի ազատ իրականացումը, այն է՝ այլ երկրի հատուկ ծառայությունների անունից հանդես գալով, տարբեր դերակատարներ, այդ թվում՝ այլ երկրի խոշոր գործարարներ, հայկական համայնքի ղեկավար անձինք, քրեական հեղինակություններ, ճնշում են գործադրում հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող ու այլ երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ՝ վերջիններիս մղելով Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած կուսակցությունների ուժերին աջակցելու գործողություններ իրականացնելուն՝ դրա դիմաց խոստանալով տարբեր պատրվակներով կազմակերպել այլ երկրից ՀՀ տեղափոխելու գործընթացը, փոխհատուցել ճանապարհածախսն ու հոգալ ՀՀ-ում գտնվելու կացության ծախսերը՝ այդկերպ նյութական կամ այլ կախվածությունն օգտագործելով՝ անձանց հարկադրելով մասնակցել ընտրությանը»: Վարույթը նախաձեռնվել է Փաշինյանի պաշտոնավարման ընթացքում Քրեական օրենսգրքում ներդրված նոր՝ 210-րդ հոդվածի կետերով: Հոդվածը վերաբերում է անձի ազատ ընտրական իրավունքի իրականացումը խոչընդոտելուն, բայց այնքան անորոշ ու հեղհեղուկ է, որ հայեցողական մեկնաբանության լայն հնարավորություն է ընձեռում իրավապահներին: Օրինակ, խոչընդոտել կարող է դիտարկվել այն, երբ մեկը կարող է զանգել եւ ասել՝ արի քեզ իմ մեքենայով տանեմ ընտրատեղամաս, կամ հորդորել իր հարեւանին՝ անպայման մասնակցել ընտրություններին:

Սա այն նույն հոդվածն է, որով հետապնդումներ են սկսել 2025-ի նոյեմբերի 16-ին Վաղարշապատում ՏԻՄ ընտրություններին մասնակից «Հաղթանակ» կուսակցությունների դաշինքի աջակիցների նկատմամբ: Նախօրեին էլ Դանիել Իոաննիսյանը հայտարարեց, որ տեղեկություն ունի, թե Ռուսաստանը Հայաստանում ծրագրում է իշխանափոխություն իրականացնել եւ այդ նպատակով ՓՀԾ-ի՝ Անվտանգության դաշնային ծառայության միջոցով ճնշում գործադրելով հայ գործարարների վրա, փորձում է Ռուսաստանից շուրջ 80 հազար ընտրող բերել Հայաստան՝ հոգալով նրանց տեղափոխման ծախսերը, ինչպես նաեւ՝ 100 հազար ռուբլի ընտրակաշառք է խոստանում յուրաքանչյուրին: Ավելին, հաղորդեց, որ հանցագործության մասին հաղորդում է ներկայացնում դատախազություն՝ ՔՕ 233 հոդվածով (կուսակցություններին ֆինանսավորելուն պարտադրելը): Այսինքն՝ իբր ռուսաստանաբնակ գործարարներին ՌԴ հատուկ ծառայությունները պարտադրում են, հօգուտ հայաստանյան կուսակցությունների մեկի, փող ծախսել: Սցենարն ակնհայտ է, 1-2 մարդ կխոսեցնեն տեսախցիկների առաջ, որոնք կհայտարարեն, թե իրենց ստիպել են քվեարկել ինչ-որ մեկի օգտին, եւ դրա հիման վրա կխոչընդոտեն ընդդիմադիր ուժերի պայքարը, ընդհուպ՝ կչեղարկեն ընտրություններին մասնակցությունը:

Քրեական իրավունքի մասնագետ **Հայկ Ալումյանը** զավեշտալի է համարում թե՛ Արտաքին հետախուզության ծառայության, թե՛ նմանատիպ այլ հայտարարություններ, նշում է, որ պետության պարտավորությունն է՝ հոգալ իր քաղաքացիների ընտրական իրավունքի ազատ իրականացմանը, որտեղ էլ որ նրանք լինեն. «Դրսում գտնվող, ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց համար պետությունը պարտավոր է ապահովել տվյալ երկրում ընտրություններին մասնակցելու հնարավորություն: Մենք տեսնում ենք շատ երկրներ, որոնք իրենց քաղաքացիներին ապահովում են այդ հնարավորությամբ՝ եւ օրենսդրությամբ, եւ տեխնիկապես: Հիմա Հայաստանը դա չի անում: Եթե ինչ-որ քաղաքացիներ ցանկություն ունեն գալ ու քվեարկությանը մասնակցել, բայց նյութապես դրա հնարավորությունը չունեն, այդտեղ իրականում պետության մտածելու խնդիրն է: Կրկնում եմ՝ եթե տեղերում ապահովեին, գուցե այս խնդիրը չառաջանար: Բայց ինչո՞ւ եք բացառում, որ ինչ-որ մարդիկ, իսկապես, ցանկություն ունեն մասնակցելու ընտրություններին: Եթե որոշները ֆինանսական խնդիրներ ունեն եւ ինչ-որ մարդկանց են խնդրել՝ ապահովել այդ հարցերը, ես այդտեղ ոչ միայն խնդիր չեմ տեսնում, այլեւ տեսնում եմ, որ որոշակի մարդիկ բարի կամք են դրսեւորել եւ պետության բացթողումների արդյունքում առաջացած իրավիճակին փորձում են լուծում տալ»: Ալումյանի համար ընդունելի չէ ընտրություններին միջամտելը, սակայն նկատում է, որ հենց արեւմտյան երկրները Հայաստանի հարցում իրենց չեզոք չեն պահում, բայց ՀՀ իշխանություններն այդ ուղղությամբ քայլեր չեն ձեռնարկում:

Ալումյանը չի բացառում, որ իշխանությունը բեմադրի կամ գտնի մարդիկ, որոնք հայտարարեն, թե իրենց ազատ ընտրական իրավունքի իրականացմանն են խոչընդոտել. «Գուցե լինեն մարդիկ, որ գան, բացահայտ ասեն՝ ինձ ուղղորդել են, սա էլ ձեզ ձայնագրություն, բայց դրան տալ համընդհանուր, համակարգված երեւույթի տեսք... իրենք պետք է ոչ միայն կոնկրետ մարդկանց ու կոնկրետ դեպքեր մատնանշեն, այլեւ ցույց տան, որ երեւույթը կրել է զանգվածային բնույթ, եւ ովքեր էլ դա արել են, ուղղորդված են եղել հատուկ ծառայությունների կողմից, եթե ունեն նման մասշտաբի ապացույցներ, ուրեմն կարող են... բայց մենք այս տարիներին շատ հայտարարություններ ենք լսել՝ Աջափնյակի մետրոյի կայարանից սկսած»:

Ինքը՝ Փաշինյանը, անդրադառնալով այն հարցին, թե որ երկրի մասին է Քրիստինե Գրիգորյանի հիմնարկի հայտարարությունը, ինչու հստակ նշված չէ, լղոզեց. «Կառավարության տեղեկություններն արտահայտված են Արտաքին հետախուզության ծառայության հրապարակած հայտարարության մեջ: Ինչ վերաբերում է իրադրության արձագանքին, կարծում եմ՝ նախ իրավական գնահատական պետք է տրվի: Բայց քաղաքական առումով իմ համոզմունքն է, եւ ես դրանում չեմ կասկածում, որ եթե այդպիսի իրավիճակ լինի, տեսականորեն ռուսաստանաբնակ մեր հայրենակիցների, մեր քաղաքացիների մեծ մասը կքվեարկի մեր օգտին, ես այդտեղ որեւէ կասկած չունեմ»: Հարց է ծագում՝ բա էլ ինչի՞ եք այդպես խառնվել իրար:



Լուսինե ՇԱՀՎԵՐԴՅԱՆ
lusine.shahverdyan@hraparak.am

ԻՐ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ ՆՄԱՆ ԵՆ 3-ՐԴ ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ԳՐԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Մարտի 11-ին Եվրոպական խորհրդարանում Նիկոլ Փաշինյանը հայտարարել է. «Մեր կարեւոր խնդիրներից է այն, որ փախստական դարձած ղարաբաղցի մեր քույրերի եւ եղբայրների էմոցիաները չշահարկվեն՝ նրանց սին հույսեր տալով: Մեր ռազմավարությունն այս հարցում շատ հստակ է. ղարաբաղցի մեր քույրերն ու եղբայրները պետք է ստանան ՀՀ քաղաքացիություն եւ առհավետ տնավորվեն Հայաստանի Հանրապետությունում: Մենք արդեն սկսել ենք նրանց բնակավորման ծրագիրը, որի շահառու են դարձել 4 հազար 886 ընտանիքներ...»: Ապա կրկին շնորհակալություն է հայտնել Ալիեւին, ասել, որ պատրաստ է Ադրբեջանին հումանիտար միջանցք տրամադրել՝ Նախիջեւանի հետ կապվելու համար:

Արցախի նախկին ՄԻՊ **Արտակ Բեգլարյանին** խնդրեցինք մեկնաբանել այս հայտարարությունը: Նա ասաց. «Նիկոլ Փաշինյանի ասածը մեզ համար նորություն չէ: Այն կոչվում է մեղսակցություն միջազգային հանցագործությանը: Փաշինյանն այս հայտարարություններով աջակցում է Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությանը, չհաշված նրան, որ նա, որպես երկրի ղեկավար, ունի հստակ պարտականություն՝ մարդկանց իրավունքները պաշտպանելու: Մարդկանց շարքերում են նաեւ փախստականները: Առանց մեր վերադարձի հարցը քննարկելու չի կարող որեւէ խաղաղության հարց քննարկվել, ոչ միայն այդ հարցում, այլեւ շատ այլ հարցեր կան, որոնք չի կարելի կոծկել: Օրինակ՝ հայատյացության հարցը, Արցախում հայկական ժառանգությունը վտանգի տակ է, վանդալիզմի վառ դրսեւորումներ կան: Ձայլամի նման գլուխն ավազի մեջ մտցնելով՝ չի կարելի ասել՝ խաղաղություն է եւ հետայսու խաղաղություն է լինելու: Արցախցիների վերադարձի հարցը հաճախ համեմատում են ադրբեջանցիների վերադարձի հետ, սակայն այդտեղ չկան համեմատության եզրեր, այդ համեմատությունը սխալ է: Բոլոր հիմնական չափանիշներով տարբերություններն էական են: Նիկոլ Փաշինյանը 2021-ի իր նախընտրական ծրագրում Արցախի դեօկուպացիա էր խոստացել ընտրողներին, սակայն նրա խոստումները նման են երրորդ դասարանում գրված իր բանաստեղծություններին, կասի՝ բան է, ասել եմ: Այդ մարդը վաղուց իր բոլոր խոստումները սկզբունքորեն խախտել է: Նա այն գործիչը չէ, որի խոսքերը պետք է հղում անենք, իսկ նա դրանից իրեն վատ զգա»:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԱՐԱՄ ԶԱՎԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԸ, ԵԹԵ ՎԱՐՉԱՊԵՏ ԴԱՌՆԱԼՈՒ ՇԱՆՍ ՈՒՆԵՆԱ, ՆԻԿՈԼԻՆ ԿՏՐՈՐԻ

ՔՎԵՍՏ

«Դրապարակի» զրուցակիցն «Ազգային ժողովրդավարների դաշինք» կուսակցության նախագահ **Արշակ Սադոյանն** է, որը ժամանակին Վազգեն Մանուկյանի ԱԺՄ կուսակցության անդամն էր եւ խորհրդարանում քննադատում էր գործող իշխանություններին:

- Հետեւո՞ւմ եք ներքաղաքական պրոցեսներին, նախընտրական թեժ պայքար է սկսվել: Ըստ Ձեզ՝ ի՞նչ պրոցեսներ են այժմ ընթանում: Ո՞ր ուժին եք սատարում:

- Ես կասեի՝ ոչ թե հետեւում եմ, այլ՝ շատ-շատ եմ հետեւում, հետեւելը մեղմ է ասված, թեպետ, տարիքիս հետ կապված, ես չեմ կարող ընտրություններին մասնակցել, սակայն դաշինքային պրոցեսների մեջ եմ ուզում ներքաշել որոշ ուժերի…. խնդիրը ես դնում եմ հետեւյալում. 2021 թվականի ընտրությունների ժամանակ Նիկոլը կարողացավ մթնոլորտ ստեղծել վատի եւ ամենավատի միջեւ, կամ ես կլինեմ վարչապետ, կամ՝ Ռոբը, եւ այդ պրոցեսի մեջ, բնականաբար, հաղթեց ինքը, քանի որ Ռոբի նկատմամբ ատելությունն ավելի մեծ էր, քան իր հանդեպ: Բայց ժողովուրդը, տեսնելով, թե այս ընթացքում ինչ է կատարվում, այժմ արդեն մարդիկ ծայրից ծայր զզվում են թե՛ Նիկոլից ու նիկոլականներից, թե՛ Ռոբից ու ռոբականներից: Այս պայմաններում բնական է, որ պատասխանատվությունն իր վրա պետք է վերցնեն այլ արտախորհրդարանական ուժեր: Նրանք պետք է փորձեն պրոցեսներին ընթացք տալ: Այսօր Նիկոլի կողմից վարվող սխալ քաղաքականության արդյունքում այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ դեպի քաղաքակիրթ աշխարհ կողմնորոշված ուժերն ազգայինի կարեւորության տեղն ու դերը չեն գիտակցում, նրանք, այսպես ասած, կիսաապազգային են, հոմոսեքսուալներ են պարտադիր եւ այլն, եւ որ հիմնական խնդիրն է՝ ազգային գաղափարներով հանդես են գալիս հյուսիսից եկող քամիները: Քաղաքակիրթ աշխարհում ազգերի տեղն ու դերն ամենուր պաշտպանված են, նույն ազգային փոքրամասնություններ: Նույն Ռուսաստանն ուզում է, որ ամենուր իշխեն ռուսական մշակույթը, ռուսաց լեզուն, բայց Արեւմուտքը երբեք չի պայքարում ոչ մեր լեզվի դեմ, ոչ մեր արժեքների դեմ, ոչ մի բանի դեմ: Ցավոք, մեզանում արեւմտամետները համարվում են ապազգային, իսկ ապազգայիններին համարում են ազգային, բայց իրականությունը ճիշտ հակառակն է:

- Մարտի 11-ին Եվրախորհրդարանում Փաշինյանը վերջնականապես փորձեց փակել արցախցիների հույսի էջը՝ պնդելով, որ նրանք մեկընդմիշտ պետք է մոռանան Արցախ վերադարձի մասին: Այս հայտարարությունն արժանացավ եվրոպացի պաշտոնյաների ծափահարություններին: Էլ ինչպե՞ս է ԵՄ-ն ազգային շահերի կողմնակից:

- Ներողություն, բայց պրիչո՛մ տուտ Եվրոպա, եթե Փաշինյանի մտավոր կարողություններն այդքան են, այդ մարդու մտավոր կարողությունները սահմանափակված են: Այդ մարդը չի հասկանում ազգայինի դերն ու տեղը:

- Այո, բայց Եվրապառլամենտում նրա ապազգային հայտարարություններն արժանացան հիացած ծափողջույնների:

- Ո՞վ է հիացած, ես այդպես չեմ կարծում: Եվրապառլամենտում երբեք Արցախի մասին հարցերի շուրջ ծափ չեն տալիս, ուրիշ բանի համար էին գուցե ծափ տալիս: Ի տարբերություն Նիկոլի, Եվրապառլամենտն Արցախի էթնիկ զտման թեմայով հարյուր անգամ դատապարտել է Ադրբեջանին՝ ամենակոպիտ խոսքերով: Բայց եթե Եվրոպան Ալիեւին կոպիտ ձեւով դատապարտում է, իսկ Նիկոլը սիլիբիլի է անում նույն Ալիեւի հետ, ապա պրիչո՛մ տուտ Եվրոպան էդտեղ:

- ԱՄՆ փոխնախագահ Վենսն էլ վերջերս ուղիղ տեքստով ասաց, որ Նիկոլ Փաշինյանի վերարտադրմանն աջակցում է: Այդ դեպքում ինչո՞ւ են աջակցում Նիկոլ Փաշինյանին, եթե ազգային արժեքների կողմնակից են:

- Թրամփն էլ, Ամերիկան էլ, Եվրոպան էլ փորձում են ամեն ինչ անել, որպեսզի Հայաստանում չեզոքանան Կրեմլի ազդեցության լծակները: Նրանք նման խնդիր ունեն, եւ բնական է, որ պետք է ասեն՝ եթե մեզ հետ գնաք, ապա ամեն ինչ լավ է լինելու: Նիկոլին նրանք ստիպում են, որ հնարավորինս ավելի արագ հեռանա Պուտինից, էդքան բան: Առաջիկա ընտրությունները բախտորոշ են լինելու ոչ միայն Հայաստանի ինքնիշխանության համար, այլեւ՝ ողջ հայ ժողովրդի համար, քանի որ նման թուլակամ իշխանությունները մեզ տանելու են կործանման: Միակ ելքը, որ այս ընտրություններով լինի իշխանափոխություն, այն է, որ գան իշխանության դեպի քաղաքակիրթ աշխարհ կողմնորոշված ուժերը:

- Ովքե՞ր են նրանք, ո՞ր ուժերի մասին եք խոսում:

- Բազմաթիվ են նրանք: Դրանք այն ուժերն են, ովքեր ստորագրահավաք արեցին՝ ԵՄ-ին անդամակցելու համար:

- Այսինքն՝ Արման Բաբաջանյան, Արամ Զավենի Սարգսյան, Հովսեփ Խուրշուդյան:

- Այո:

- Բայց նրանք Նիկոլ Փաշինյանի բացահայտ աջակիցներն են: Արամ Զավենիչը Երեւանի ավագանիում գործարքի գնաց ՔՊ-ի հետ, նա ՔՊ-ականներից ավելի շատ է աջակցում Փաշինյանին:

- Ներողություն, բայց քաղաքական դաշտի բուն էությունը մրցակցությունն է: Նրանք իրենց կուսակցության շահերից ելնելով՝ մի պահ աջակցել են Նիկոլին, բայց եթե հնարավորություն ունենան, Նիկոլին ոտքի տակ կտան:

- Ինչո՞ւ պետք է Արամ Զավենիչը Նիկոլին ոտքի տակ տա, նրա կռիվը ռուսների եւ Քոչարյանի դեմ է:

- Ակնհայտ է, որ նա գիտի բոլոր դառնությունները, նա առավոտից երեկո Նիկոլին է քննադատում՝ Շանհայի հետ կապված:

- Որտե՞ղ է քննադատում, բացառապես ՔՊ-ի գովքն է անում:

- Շանհայի հարցում քննադատեց: Արամ Զավենի Սարգսյանը եթե վարչապետ դառնալու շանս ունենա, Նիկոլին կտրորի: Այդ կարգի մարդիկ պետք է միավորվեն իրար, թե չէ՝ ո՞վ ասաց, որ սիրում են Նիկոլին:

Հայկ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԽԱՂԱԴԱՇՏԻ ԴԱՐՊԱՍՆԵՐԸ ՑԱՆՑԵՐ ՉՈՒՆԵՆ, ՆՍՏԱՐԱՆՆԵՐ ՉԿԱՆ



«Մասնակցային բյուջետավորում 2026թ.» ծրագիրը Տավուշի մարզի համայնքներում մեծ աղմուկ առաջացրեց: Համայնքապետարանները գովազդում էին, որ մասնակցային բյուջետավորման գործընթացը քաղաքացիներին հնարավորություն է տալիս անմիջականորեն մասնակցել համայնքային բյուջեի մի մասի բաշխմանը եւ իրենց համայնքի զարգացմանը վերաբերող որոշումների կայացմանը՝ ձեւավորելով ավելի պատասխանատու եւ ներառական տեղական ինքնակառավարում: Այսինքն, բնակչությունը պետք է ծրագրեր առաջարկեր, դրանք քննարկվեին՝ հավանության արժանանային եւ իրականացվեին տեղական ինքնակառավարման մարմինների կողմից:

Համայնքների բնակավայրերից ներկայացված ծրագրերի հեղինակներն էլ իրենց բարեկամներին, ծանոթներին, անգամ՝ անծանոթներին խնդրում էին համայնքապետարանի ինտերնետային էջը մտնել եւ քվեարկել իրենց ներկայացրած ծրագրի օգտին, որպեսզի այն շատ քվեներ ստանա, հաղթող ճանաչվի ու իրականացվի: Ստացվեց Եվրատեսելի կամ երգի մրցույթների քվեարկության նման մի բան: Սակայն «Մասնակցային բյուջետավորում» ծրագիրն իրականում նորույթ չէր, այն անցյալ տարի եւս իրականացվել է: Այդ ծրագրին քաղաքացիների մասնակցությունը կարեւոր է ծրագրային առաջարկներ ներկայացնելու, համայնքի զարգացմանը վերաբերող որոշումների կայացմանը մասնակցելու առումով, սակայն քաղաքացիները պետք է ուշադիր եւ հետեւողական լինեն այդ ծրագրերով համայնքներում կատարված աշխատանքների որակի, ծրագրի նախագծին դրանց համապատասխանության առումով:

Դիտարկենք «Մասնակցային բյուջետավորում» ծրագրի շրջանակներում Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցում խաղահրապարակի կառուցման ծրագիրը: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքի «Հաշվետվություններ» բաժնում ներկայացված աշխատանքների թվում է նաեւ որպես մասնակցային բյուջետավորմամբ ձեւավորված եւ սուբվենցիաներ ստացած ծրագրերի հաշվետվությունը, որը ներկայացվել է Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի կողմից տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն: Այդ ծրագրերի մեջ է նաեւ Դիլիջանի Գետափնյա 74 շենքին հարակից տարածքում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցման հաշվետվությունը, որին կից փաստաթղթում որպես ծրագրի նպատակ նշված է. «Կառուցել բազմաֆունկցիոնալ խաղադաշտ, որտեղ կարող են զբաղվել սպորտով ոչ միայն երեխաները, այլ նաեւ՝ մեծահասակները: Կարեւոր է նշել, որ խաղադաշտը տարբեր մարզաձեւերի համար է, այդ թվում՝ ֆուտբոլի, բասկետբոլի, վոլեյբոլի համար նախատեսված իրենց ատրիբուտներով, ինչը զգալիորեն կբարձրացնի առողջ ապրելակերպի տարածումը եւ զարգացումը Դիլիջանում: Ծրագրի իրականացումը կխթանի հանրային առողջությունը համայնքում, եւ կբարելավվեն ենթակառուցվածքները»:

Որպես ծրագրի շահառու՝ նշված են Դիլիջան բնակավայրի տվյալ թաղամասի ավելի քան 1100 բնակիչները: Ծրագրի կապալառուն Աշտարակ քաղաքում գրանցված «Վեռանժ» ՍՊԸ-ն է: Դիլիջանի Գետափնյա 74 շենքին հարակից տարածքում բազմաֆունկցիոնալ խաղադաշտի կառուցման ծրագրի սկիզբը նշված է 2025թ. հունվարի 1-ը, ծրագրի ավարտը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ը: Ծրագրի արժեքը 18 միլիոն 935 հազար 633 դրամ է: Նախատեսված էր ձեռք բերել, տեղադրել 3 հատ նստարան, յուրաքանչյուրը՝ 60 հազար դրամով, 2 աղբաման, յուրաքանչյուրը՝ 10 հազար դրամով, 2 վոլեյբոլի ցանց, յուրաքանչյուրը՝ 16 հազար 500 դրամով, 2 հատ բասկետբոլի վահանակ՝ ցանցով, յուրաքանչյուրը՝ 53 հազար 80 դրամով, 2 հատ ֆուտբոլի դարպաս՝ ցանցով, յուրաքանչյուրը 250 հազար դրամ արժեքով:

Ծրագրի հաշվետվության մեջ ներկայացված է կառուցված խաղադաշտի 2 լուսանկար, որոնց մեջ հստակ երեւում է, որ խաղադաշտում նստարանները տեղադրված են, ֆուտբոլի դարպասները ցանցով պատված չեն: Լուսանկարներից ակներեւ է, որ նորակառույց խաղադաշտի շրջակայքը կարիք ունի բարեկարգման: Ահա, մասնակցային բյուջետավորմամբ կիսատ-պռատ արված մի ծրագիր՝ Դիլիջանի Գետափնյա փողոցի բնակիչների համար:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

ԱԶԱՏ ԱՄԲԻՈՆ

Ո՞Վ Է ՂԵԿԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹՅՈՒՆԸ

Նիկոլ Փաշինյանը Հայաստանի պետական կառավարման մարմինները, առանց բացառության, վերածել է նախընտրական պայքարի գործիքների, դրանց գործունեությունն ուղղված է միայն ռեժիմի վերարտադրությանը: Նույնիսկ այնպիսի կառույց, ինչպիսին Արտաքին հետախուզության ծառայությունն է, օգտագործվում է քաղաքական հակառակորդների դեմ պայքարում, թերեւս նաեւ այն պատճառով, որ այլ նպատակի չի էլ կարող ծառայել:

Մարտի 11-ին ԱՀԾ-ն մի հաղորդագրություն տարածեց, ըստ որի՝ «ԱՀԾ-ն հետախուզական տեղեկություններ է ստանում, որ այլ երկրում տվյալ երկրի հատուկ ծառայությունների անունից հանդես գալով, տարբեր դերակատարներ փորձում են ճնշում գործադրել հայազգի եւ ՀՀ քաղաքացի հանդիսացող ու տվյալ երկրում տնտեսական գործունեությամբ զբաղվող անձանց նկատմամբ՝ վերջիններիս մղելով Հայաստանում սպասվող խորհրդարանական ընտրություններին մասնակցության հայտ ներկայացրած քաղաքական որոշ ուժերին աջակցելու գործողություններ իրականացնելուն, որոնք ներառում, սակայն չեն սահմանափակվում տվյալ քաղաքական ուժերին նշված գործարարների կողմից ֆինանսական եւ կազմակերպական բնույթի աջակցության գործողություններով»: Հայտարարությունը հնարավորինս անորոշ է՝ ոչ երկրի անունն է հայտնի, ոչ հատուկ ծառայության, ոչ էլ կոնկրետ անձանց, թե ով ում վրա է ճնշում գործադրում, հանուն որ ուժի: Բայց բոլորը հասկացան, թե Փաշինյանի ասածն ինչ է:

ԱՀԾ հաղորդագրությունը լրացրեց՝ մանրամասնեց փաշինյանական ռեժիմի հաստիքային քարոզիչ Դանիել Իոաննիսյանը, որը հարցազրույց տալով հայտարարեց, որ Ռուսաստանը Հայաստանում ծրագրում է իշխանափոխություն իրականացնել եւ այդ նպատակով ՓՀԵ-ի՝ Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության միջոցով ճնշում գործադրելով հայ գործարարների վրա՝ փորձում է Ռուսաստանից շուրջ 80 հազար ընտրող բերել Հայաստան, հոգալով նրանց տեղափոխման ծախսերը, եւ յուրաքանչյուրին 100 հազար ռուբլի ընտրակաշառք է խոստանում: Իոաննիսյանը տեղեկացրեց, որ իրենք դիմել են դատախազություն՝ ընդդեմ Ռուսաստանի ՓՀԵ-ի քրեական գործ հարուցելու համար: Լրագրողի հարցին, թե ինչ կարող է անել դատախազությունն օտար երկրի հատուկ ծառայության դեմ, Իոաննիսյանը հուշեց կամ հրահանգեց, որ կարող են Հայաստանում ՓՀԵ-ի գործողություններին աջակցողներին քրեական հետապնդման ենթարկել, Հայաստանի տարածքում հանցագործության խափանմանն ուղղված քայլեր անել՝ ընտրություններին ապօրինի միջամտությունը կանխել: Ստացվում է, որ գործը հարուցվելու է ոչ թե ՌԴ ԱԴԾ-ի, այլ դրա գործունեությանն աջակցողների դեմ, իսկ այդպիսին կարող է հռչակվել ռեժիմի ցանկացած քաղաքական հակառակորդ կամ մրցակից:

Բացի դատախազությունից, Հայաստանի արտաքին հետախուզության ծառայության հաղորդման հիման վրա քրեական վարույթ հարուցելու մասին հայտարարություն տարածեց նաեւ ՀՀ Քննչական կոմիտեն: ՔԿ հաղորդագրությունից էլ պարզ դարձավ, որ Կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչությունում կա ընտրական հանցագործությունների քննության վարչություն: Երեւի աշխարհում միակ երկիրն ենք, որտեղ կա ընտրական հանցագործությունների քննության վարչություն, որի միակ գործունեությունն իշխանության քաղաքական հակառակորդների դեմ քրեական գործեր սարքելն ու վերջիններիս չեզոքացնելն է: Այս քրեական վարույթի իմաստն էլ այն է, որ իբրեւ թե փաստական տվյալներ են ձեռք բերվել, որ քաղաքական դաշտում գործունեություն ծավալող կուսակցությունների ղեկավարները, համագործակցելով այլ երկրի հատուկ ծառայությունների անունից հանդես եկող գործարարների հետ, նպատակ ունեն խոչընդոտել քաղաքացիների ընտրական իրավունքի իրացմանը:

Եթե մի կողմ դնենք իրավական ձեւակերպումները, այս թատոնի իմաստը հետեւյալն է. ՌԴ հատուկ ծառայությունները Ռուսաստանում ապրող հայ գործարարների միջոցով փորձում են կաշառել ՌԴ-ում ապրող՝ ՀՀ քաղաքացի հանդիսացող 80 հազար ընտրողներին, նրանց ցամաքային եւ օդային ճանապարհով ուղարկել Հայաստան, որ նրանք մասնակցեն ընտրություններին, քվեարկեն ընդդիմադիր կուսակցության օգտին, դրանով նպաստեն Փաշինյանի պաշտոնազրկմանը:

Իրականում, այս ամենը Նիկոլ Փաշինյանի եւ նրա ռեժիմի վախերի արդյունք է, ուրիշ ոչինչ: Փաշինյանը եւ իր թիմը վախենում են իշխանությունը կորցնելուց, դրա հետեւանքներից եւ փորձում են ամեն կերպ կանխել ընտրությունները կամ դրանց օրինական ընթացքը: Դատեք ինքներդ. 2021 թվականի խորհրդարանական ընտրություններում ընտրողների թիվը եղել է 2 միլիոն 595 հազար, 80 հազար ընտրողը կազմում է ընտրողների ընդհանուր թվի 3 տոկոսը: Եթե անգամ վերցնենք ընտրության մասնակիցների թիվը՝ 2021-ին եղել է 1 միլիոն 282 հազար, այդ թվի մեջ էլ 80 հազարը կազմում է մոտ 6 տոկոս: Եթե անգամ հավատալու լինենք Իոաննիսյանի եւ Հայաստանի արտաքին հետախուզության ծառայություն կոչվող մարմնի տեղեկություններին, եթե հավատալու լինենք, որ ռուսահայ գործարարները կարող են մոբիլիզացնել 80 հազար հայ ընտրողի եւ նրանց ուղարկել Հայաստան, եւ եթե հավատանք, որ նրանք՝ բոլորն էլ կքվեարկեն ըստ իրենց տրված ցուցումի, ապա, միեւնույն է, ստացվում է, որ Հայաստանի իշխանության ճակատագիրը կախված է ընտրական իրավունք ունեցողների 3 տոկոսից, այդ 3 տոկոսն է որոշելու ընտրության արդյունքը, այդ 80 հազարը եւ ոչ թե մնացած 2,5 միլիոն ՀՀ ընտրողներն են որոշելու Հայաստանի իշխանության հարցը:

Ինչո՞ւ է իշխանությունը գնում նման ավանտյուրայի, եւ ի՞նչ հետեւանքների կարող է դա հանգեցնել: Իշխանությունը կարող է ընտրություններին նախորդող մեկ ամիսը փակել Հայաստան-Ռուսաստան օդային եւ ցամաքային սահմանը եւ ՀՀ քաղաքացիներին ու օտարերկրացիներին զրկել ազատ տեղաշարժի իրավունքից: Կարող է այդ հիմքով՝ օտարերկրյա պետության կամ նրա հատուկ ծառայության կողմից Հայաստանի ընտրական պրոցեսին միջամտության հիմքով կասեցնել որեւէ կուսակցության կամ կուսակցությունների գրանցումը կամ արգելել մասնակցությունն ընտրություններին, անգամ կարող է չեղարկել ընտրությունները՝ հայտարարելով, որ մտավախություն ունեն, թե օտար պետությունը եւ նրա հատուկ ծառայությունը պատրաստվում են ընտրությունների քողի տակ կամ ընտրություններն օգտագործելով, Հայաստանում հեղաշրջում իրականացնել: Կարող են այս մանիպուլյացիան օգտագործել երկրում տեռոր եւ ապօրինություններ իրականացնելու համար՝ կալանավորել հարյուր, հազարավոր մարդկանց, ինչպես Իոաննիսյանն է ասում՝ ԱԴԾ գործունեությանն օժանդակելու մեղադրանքով:

Մի բան պարզ է. Փաշինյանը եւ նրա ռեժիմը հասկացել են, որ արդար եւ մրցակցային ընտրություններով իրենք հաղթելու եւ իշխանություն պահելու ոչ մի շանս չունեն, միակ հույսը մնացել են կեղծիքը, բռնությունը եւ ապօրինությունը:

Ավետիս ԲԱԲԱՋԱՆՅԱՆ

ԾԱՓԵՐ՝ ԱՐՑԱԽԻ ԹԱՂՄԱՆԸ

Հոտնկայս ծափահարությունների շատ դեպքեր եմ հիշում: Մեր ժամանակներում գենսեկներին էին այդպես ծափահարում՝ հոտնկայս, բուռն եւ երկարատեւ: «Պրավդա» թերթում Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւի հսկայածավալ ելույթից հետո միշտ գրում էին՝ բուռն եւ երկարատեւ ծափահարություններ: Իսկ ինչ վերաբերում է կանգնած ծափահարելուն, ապա կապ չուներ, թե այդ պահին որտեղ էր ընկեր Բրեժնեւը: Նա ելույթ էր ունենում Կրեմլի սյունազարդ դահլիճում, իսկ նրան հոտնկայս ծափահարում էին ամենուր՝ Երեւանում, Բաքվում, Տաշքենդում, Կիեւում, Մինսկում, անգամ՝ մերձբալթյան հանրապետություններում: Ես արդեն լավ չեմ հիշում՝ այդկերպ հարգո՞ւմ էին այդ մարդուն, թե՞ ձեռ էին առնում: Մի անգամ էլ ես եմ ծափահարել՝ հոտնկայս, բուռն ու երկարատեւ: Եկան, մեր աշխատավորական կոլեկտիվում հայտարարեցին, որ ՍՍՀՄ Կոմունիստական կուսակցության գլխավոր քարտուղար (գենսեկ), ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահ, բազմահարգ ընկեր Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւին Մոսկվայի Կրասնոպրեսնենսկի (այժմ Պրեսնենսկ) շրջանի աշխատավորներն առաջադրել են Գերագույն սովետի պատգամավորության թեկնածու: Մենք մի մարդու պես ոտքի կանգնեցինք եւ սկսեցինք բուռն ու երկարատեւ ծափահարել: Ներքին մղում չկար, իհարկե, բայց գիտեինք, որ մեր աշխատավորական բջջի կուսղեկը (պարտօրգ) ակնոցի վրայից նայում է մեզ ու ստուգում՝ բոլո՞ր ենք, արդյո՞ք, հոտնկայս եւ բոլո՞ր ենք, արդյո՞ք, բուռն ու երկարատեւ ծափահարում:

Շատ չերկարացնեմ, բայց ասեմ, որ մեր ժամանակներում ընդունված է հոտնկայս ծափահարել նաեւ բեմի երախտավորներին՝ վերջին հրաժեշտը տալու պահերին: Սիրելի դերասանին կամ երգչին, անգամ երգահանին ու բանաստեղծին այդպես է ճանապարհում նրա հանդիսատեսը կամ ընթերցողը:

Որեւէ կերպ, սակայն, ես չեմ հասկանում, թե ինչպես կարելի է հոտնկայս, բուռն ու երկարատեւ ծափահարել մեր օրերի քաղաքական գործիչներին, որոնք, մեր մեջ ասած, ոչ Լեոնիդ Իլյիչ Բրեժնեւի խարիզման ունեն, ոչ էլ այնպիսի գործեր են թողել, որոնք արժանի են ծափերով հիշվելու: Եվրոպացիները հոտնկայս ծափերի են արժանացրել մեր ժամանակների այնպիսի քաղաքական գործիչների, ինչպիսիք են Միխեիլ Սահակաշվիլին, Վոլոդիմիր Զելենսկին, Սալոմե Զուրաբիշվիլին, Մայա Սանդուն: Հուսամ՝ բոլորին տեղը բերեցիք ու լավ գիտեք, թե իրենց ժողովուրդների գլխին ինչ փորձանք են բերել նրանք: Երկու օր առաջ էլ այդ նույն եվրոպացիները Եվրախորհրդարանում հոտնկայս ծափահարեցին ՀՀ վարչապետին: Ինչո՞ւ, ո՞ր արժանիքի համար: Նա ոչ Բրեժնեւն է, ոչ էլ, առավել եւս, հանգուցյալ արվեստագետ, որ մի հատ էլ հոտնկայս ծափահարեք: Եվ, առհասարակ, պարոնայք եւ տիկնայք եվրոպացիներ, այդպիսի ժեստեր անելուց առաջ կարելի էր մի հատ էլ վրացի, ուկրաինացի, մոլդովացի եւ հայ ժողովուրդներից հետաքրքրվել՝ արժե՞ իրենց ղեկավարին ծափահարել, թե՞ չարժե: Ի վերջո, դուք ո՞վ եք, որ ինքնագլուխ կերպով եք որոշում դա: ՀՀ-ում ՔՊ-ական սբրոդը հոտնկայս, բուռն ու երկարատեւ ծափերով է ողջունում վարչապետի ամեն շարժումը՝ եկեղեցի մտնել, եկեղեցուց դուրս գալ, մորուք պահել, սափրվել, զուգարան մտնել, զուգարանից դուրս գալ, հող հանձնել, թշնամու առաջ ծնկի գալ, սուտ խոստումներ տալ, խոստումները չկատարել… Բարձր ամբիոններից հայհոյանքներ է տալիս՝ դա էլ են անգամ ողջունում ծափերով: Այս ամենը՝ ՀՀ-ում… Բայց ինձ բացատրեք՝ դո՞ւք ինչու եք ծափահարում, ի՞նչ պատահեց ձեզ: Դեռ երեկ որոշում էիք ընդունել, որ դատապարտում եք Արցախի հայաթափումը: Այսօր ծափահարում եք Արցախը հայաթափողին: Ասում էիք՝ անթույլատրելի է Արցախի ղեկավարությանը Բաքվի բանտերում պատանդ պահելը: Այսօր ծափահարում եք այդ հարցը շրջանցող ու Ալիեւին շնորհակալություն հայտնող ՀՀ վարչապետի՞ն: Քանի՞ անգամ եք մեծ-մեծ խոսել արցախահայության՝ իր հայրենիքում ապրելու իրավունքի մասին: Եվ հիմա դուք ձեզնից չե՞ք զզվում, երբ ծափահարում եք արցախահայության իրավունքը հենց ձեր աչքի առաջ ոտնատակ տվող այդ մարդուն: Քանի՞ երես ունեք դուք:

Այնպես էլ չէ, որ չգիտենք, թե ինչու է Եվրոպան ծափահարում ՀՀ վարչապետին: Իրենց դրածոներին տերերը միշտ ծափահարում են, ինչ էլ այդ դրածոն անի՝ հանուն իր տերերի: Այս դեպքում դրածոն իր տերերին լիքը գլխացավանքներից է ազատել, այդ թվում՝ Եվրոպայի գլխավոր գործընկեր Իլհամ Ալիեւի բոլոր գործողությունները, 44-օրյա պատերազմից մինչեւ Արցախի հայաթափում ու ՀՀ տարածքի օկուպացիա, ամենաբարձր մակարդակով լեգիտիմացնելուց: Մնում էր մի հատ էլ «տուշ» նվագեին:

Էդիկ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ
edik.andreasyan@hraparak.am

ՎՐԱՍՏԱՆԸ ՉՊԵՏՔ Է ՓՈՐՁԻ ԽԱՂԱԼ «ՄԵԾ ՄԻՋՆՈՐԴԻ» ԴԵՐ

*«Հրապարակի» զրուցակիցը վրացի քաղաքագետ **Գելա Վասաձեն** է:*

- Վրաստանի վարչապետ Իրակլի Կոբախիձեն հայտարարել է, որ հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորումը կարեւոր է Վրաստանի համար, եւ որ Թբիլիսին պատրաստ է նպաստել խաղաղությանը: Ի՞նչ ձեւաչափով կարող են ձեր երկրի միջնորդական ջանքերը լինել առավել արդյունավետ:

- Ես կսկսեի շատ պարզ բանից: Վրաստանը չպետք է փորձի խաղալ «մեծ միջնորդի» դեր: Դա ո՛չ մեր գործառույթն է, ո՛չ էլ մեր խնդիրը: Սակայն Վրաստանն ունի մեկ այլ, շատ ավելի արժեքավոր առավելություն. մենք Հարավային Կովկասի բնական մասն ենք կազմում: Հարավային Կովկասում խաղաղությունը կկառուցվի ոչ այնքան դիվանագետների, որքան տնտեսության եւ ենթակառուցվածքների միջոցով: Եվ այստեղ Վրաստանի դերը համագործակցության, լոգիստիկայի եւ առեւտրի համար պայմաններ ստեղծելն է: Երբ երկրները սկսում են միասին գումար վաստակել, հակամարտություններն աստիճանաբար կորցնում են իրենց իմաստը:

- Կոբախիձեն նաեւ ընդգծել է Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ ռազմավարական գործընկերությունը: Ձեր կարծիքով, հայ-վրացական հարաբերություններում ի՞նչ ներուժ դեռեւս չի իրացվել:

- Ներուժը հսկայական է: Եվ այն շատ ավելի լայն է, քան այսօրվա առեւտուրը կամ զբոսաշրջությունը: Նախ, կա տրանսպորտ եւ լոգիստիկա: Հայաստանի համար վրացական ենթակառուցվածքները՝ նավահանգիստները, երկաթուղիները, տրանսպորտային միջանցքները, օբյեկտիվորեն կենսական նշանակություն ունեն: Եվ Վրաստանի համար Հայաստանը տարածաշրջանային տարանցիկ համակարգի մաս է կազմում: Երկրորդ. կա էներգետիկա: Այստեղ կան համատեղ նախագծերի հնարավորություններ՝ էլեկտրաէներգիայից մինչեւ տարածաշրջանային էներգետիկ ցանցեր: Երրորդ. կան տեխնոլոգիաներ եւ կրթություն: Հայաստանն այսօր ունի ուժեղ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտ, մինչդեռ Վրաստանն ունի բարենպաստ բիզնես միջավայր եւ միջազգային բացություն: Եթե այս գործոնները համակցվեն, կարող է ի հայտ գալ իսկապես նշանակալի տարածաշրջանային տեխնոլոգիական կենտրոն: Վերջապես, կան մարդկային կապեր: Երկրների միջեւ միլիոնավոր ուղեւորությունները միայն զբոսաշրջություն չեն: Դրանք տարածաշրջանի սոցիալական կառուցվածքն են, որոնք հարաբերություններն ավելի դիմացկուն են դարձնում:

- Վրաստանը վերջերս խորհրդանշական գին սահմանեց՝ Ադրբեջանից Հայաստան իր տարածքով մատակարարումների համար: Ի՞նչ է նշանակում դա լայն իմաստով: Երեւանում այս քայլը ողջունել են, իսկ Բաքուն այդ թեմայով, նախքան Վրաստանի այդ որոշումը, որոշակի նեղացածություն եւ դժգոհություն ուներ Թբիլիսիից:

- Իրականում, այստեղ կարեւորը ոչ թե սակագինն է, այլ՝ քաղաքական ազդանշանը: Վրաստանը ցույց է տալիս, որ եթե Բաքուն եւ Երեւանը պատրաստ են համագործակցել, Թբիլիսին տարանցումը չի վերածի ճնշման կամ քաղաքական խաղերի գործիքի: Խորհրդանշական գինը, ըստ էության, ցույց է տալիս, որ տարածաշրջանային լոգիստիկան պետք է գործի որքան հնարավոր է ազատ: Ինչ վերաբերում է միանվագ անվճար օգտագործման հնարավորությանը, սա մի տեսակ փորձնական աշխատանք է, փորձ՝ ցույց տալու, որ նման երթուղիները կարող են գործել առանց ավելորդ խոչընդոտների: Ակնհայտ է, որ Ադրբեջանը շատ զգույշ է նման հարցերի նկատմամբ: Բաքվի համար տարանցումը ռազմավարական հարց է: Հետեւաբար, արձագանքը զգույշ է, եւ սա լիովին նորմալ է:

- Իրանի շուրջ ստեղծված իրավիճակը լուրջ մտահոգություն է առաջացնում: Եթե հակամարտությունը ձգձգվի, ի՞նչ հետեւանքներ կարող են լինել Վրաստանի համար:

- Վրաստանի համար այստեղ հիմնական վտանգը ռազմական չէ, այլ՝ աշխարհատնտեսական: Հարավային Կովկասը Եվրոպայի եւ Ասիայի միջեւ տրանսպորտային համակարգի կարեւոր մասն է: Իրանի շուրջ ցանկացած խոշոր անկայունություն անխուսափելիորեն ազդում է առեւտրային ուղիների, լոգիստիկայի եւ էներգետիկայի վրա: Երկրորդ խնդիրն աշխարհաքաղաքական անկայունության աճն է: Եթե հակամարտությունը երկարաձգվի, տարածաշրջանն անխուսափելիորեն կդառնա խոշոր տերությունների ակտիվ ներկայության տարածք: Եվ երրորդ խնդիրը մարդասիրական է: Մերձավոր Արեւելքում ցանկացած խոշոր պատերազմ հանգեցնում է մարդկանց տեղահանության եւ տնտեսական ու սոցիալական հետեւանքների հարեւան տարածաշրջանների համար: Հետեւաբար, Հարավային Կովկասի բոլոր երկրների համար այսօր գլխավոր խնդիրը տարածաշրջանային կայունության առավելագույն պահպանումն է: Իրանի շուրջ երկարատեւ անկայունությունը կարող է ազդել տարածաշրջանի ողջ զարգացման ճարտարապետության վրա:

Արա ԱԼՈՅԱՆ

Պատրիարքի նամակը՝ անպատասխան

Մարտի 10-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ, սկսվել է Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը: Մենք հետաքրքրվեցինք՝ այս նիստին արդյոք մասնակցո՞ւմ է Մայր Աթոռի դիվանապետ Արշակ սրբազանը, որը մի քանի օր առաջ ազատ արձակվեց կալանքից, եւ նրա նկատմամբ որեւէ սահմանափակում դատարանը չի կիրառել, միայն վարչական վերահսկողություն է սահմանվել, որ չպետք է դուրս գա Վաղարշապատ խոշորացված համայնքի սահմաններից, իսկ Վեհարանն այդ սահմանների շրջանակներում է գտնվում: Նշանակում է՝ Արշակ արքեպիսկոպոսի՝ ժողովին մասնակցելու որեւէ արգելք չկար: Սակայն նրա աթոռը թափուր էր ժողովի լուսանկարում, ինչից հասկանալի է, որ Արշակ սրբազանը չի մասնակցում: Հետաքրքրվեցինք նաեւ, թե քննարկվո՞ւմ է արդյոք Ավստրիայի Եպիսկոպոսաց ժողովից հետո գրված Պոլսի պատրիարք Մաշալյանի նամակը՝ ուղղված Վեհափառին, որտեղ նա բարենորոգման առաջարկներ էր արել, այդ թվում՝ Գերագույն հոգեւոր խորհուրդն արձակելու, նոր մարմին ձեւավորելու, այն հիմնավորմամբ, որ Խորհուրդը հեղինակազրկվել է, հարկավոր է նոր մարմին ձեւավորել՝ 12 ավագ եպիսկոպոսներից, որոնք «նեցուկ կլինեն Վեհափառ հայրապետին»: Մեր աղբյուրներն ասացին, որ Հոգեւոր խորհրդի ժողովում Սահակ Մաշալյանի նամակը չի քննարկվել, եւ դրան որեւէ անդրադարձ չի եղել, գոնե՝ մերձ աղբյուրներին նման բան հայտնի չէ:

ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՐՅՈՒՐԱՎՈՐ ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐ ՉԵՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ

Մարտի 5-ին տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանին տեղեկատվական հարցում էի ուղարկել՝ կազմված 3 հարցից. «1. 2026թ. փետրվարի 12-ին կառավարության որոշմամբ մարզպետների աշխատակազմերին թույլատրվել է 2022-2025 թվականներին հավանության արժանացած եւ համայնքապետարանների հետ կնքված ենթակառուցվածքների զարգացման սուբվենցիոն ծրագրերի պայմանագրերում կատարել փոփոխություններ եւ դրանց ժամկետները երկարացնել մինչ 2027թ. հունիսի 30-ը: Դա վերաբերում է այն համայնքներին, որոնցում աշխատանքները պետք է ավարտվեին մինչեւ 2025թ. նոյեմբերի 15-ը: Այդ որոշմամբ քանի՞ ծրագրի իրականացում է հետաձգվել, որքա՞ն է դրանց ֆինանսավորման ընդհանուր չափը, այդ պայմանագրերից քանի՞սն են կնքվել 2022-ին, քանիսը՝ 2023-ին, 2024-ին եւ 2025-ին:

2. Դիլիջան քաղաքի Գետափնյա փողոցի բարեկարգման, ասֆալտապատման սուբվենցիոն ծրագիրը ե՞րբ է մեկնարկել, որքա՞ն է ծրագրի արժեքը, ծրագիրը նախագծից որքա՞ն մեծ շեղումներով է իրականացվել, ծրագրով նախատեսված մեծածավալ աշխատանքներն ինչո՞ւ չեն իրականացվել:

3. Կառավարության փետրվարի 12-ի որոշման հիմքով Տավուշի մարզում սուբվենցիոն քանի՞ ծրագրի իրականացման ժամկետ է երկարաձգվել, որո՞նք են այդ ծրագրերը, որքա՞ն է յուրաքանչյուրի արժեքը, որո՞նք են կապալառու կազմակերպությունները, այդ ծրագրերից յուրաքանչյուրն ի՞նչ պատճառով է հետաձգվել»:

Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Ա. Դարբինյանի ստորագրությամբ պատասխանում նշված է. «Հայտնում ենք, որ ՀՀ կառավարության 12.02.2026թ. թիվ 142-Ն որոշմամբ երկարաձգվել են ընթացքի մեջ գտնվող 2024 եւ 2025 թվականներին հավանության արժանացած Տավուշի մարզի 44 ենթածրագրեր (2024թ.՝ 6 ենթածրագիր, 2025թ.՝ 38 ենթածրագիր): Հարկ է նշել, որ 2022 եւ 2023 թվականներին հավանության արժանացած երկարաձգման ենթակա ծրագրեր ՀՀ Տավուշի մարզում չկան: 2024թ. սեպտեմբերի 26-ին կայացած միջգերատեսչական հանձնաժողովի նիստի N ՓՎ/129-2024 արձանագրությամբ հավանության արժանացած ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան համայնքի «Դիլիջան բնակավայրի Գետափնյա փողոցի ասֆալտապատում եւ մայթերի վերանորոգում եւ Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստեւ հատվածի սելավատարի կառուցում» ծրագրի ընդհանուր արժեքը 1,033,4271,279 ՀՀ դրամ է, որից 620,052,767 ՀՀ դրամը համայնքի մասնաբաժինն է, իսկ 413,368,512 ՀՀ դրամը՝ պետական աջակցության չափը: Գետափնյա փողոցի ասֆալտապատում ենթածրագրի շինարարական աշխատանքները գտնվում են ընթացքում, կատարվել է աշխատանքների շուրջ 60 տոկոսը, իսկ Մյասնիկյան-Սայաթ-Նովա-Աղստեւ հատվածի սելավատարի կառուցման աշխատանքներն ավարտված են»:

Փաստորեն, տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունն անտեսել է տեղեկատվական հարցմանս առաջին հարցը: Կարող եմ ենթադրել, թե ինչու: ՀՀ-ում հարյուրավոր սուբվենցիոն ծրագրեր, որոնց արժեքը կազմում է հարյուրավոր միլիարդ դրամներ, տարբեր պատճառներով երկարաձգվել են: Եվ այդ հետաձգումների մեջ մեղքի իր բաժինն ունի տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը: Նախարարությունը նաեւ չի հայտնել, թե որքան է Տավուշի մարզում երկարաձգված սուբվենցիոն ծրագրերից յուրաքանչյուրի արժեքը, որոնք են կապալառու կազմակերպությունները, այդ ծրագրերից յուրաքանչյուրն ինչ պատճառով է հետաձգվել, Դիլիջան բնակավայրի Գետափնյա փողոցի ասֆալտապատման եւ մայթերի վերանորոգման ծրագիրը նախագծից որքան մեծ շեղումներով է իրականացվել: Իսկ այն ծրագրի նախագծից հսկայական շեղումներով է իրագործվել:

Ոսկան ՍԱՐԳՍՅԱՆ

Ինչպես են ստեղծվել առաջին կինոպաստառները

Կինոարվեստի ձեւավորման առաջին օրերից Հայաստանում ակտիվորեն զարգացել է նաեւ կինոյի հետ կապված եւս մեկ կարեւոր ոլորտ՝ ցուցապաստառների դիզայնն ու կինոպլակատների ձեւավորումը: Այս պաստառներից է հանդիսատեսը «ծանոթանում» կինոնկարին եւ առաջին տպավորությունը ստանում ֆիլմի մասին: Հայ նկարիչների ստեղծած կինոպլակատները Խորհրդային Հայաստանի մշակութային ժառանգության կարեւոր մասն են եւ արտացոլում են ժամանակի գաղափարները, գեղագիտությունը, ճաշակն ու արժեքները:

Պահպանվել են դեռ 1920-ականներին նկարված կինոպլակատներ: 2006-ին ռեժիսոր Վիգեն Գալստյանը վավերագրական ֆիլմով հանդիսատեսին է ներկայացրել 121 կինոցուցապաստառ: Ինչպես նշում են մասնագետները, այս ոլորտը քիչ է ուսումնասիրված, քանի որ վաղ շրջանի շատ գործեր չեն պահպանվել, շատ պլակատներ ոչնչացվել են դեռ խորհրդային շրջանում, որոշ գործեր պահպանվել են մասնավոր հավաքածուներում եւ լայն հասարակությանը հասանելի չեն: Իսկ հայկական կինոպլակատների ավանդույթը սկիզբ է առել 1925-ին, երբ Համո Բեկնազարյանը նկարահանեց «Նամուսը»: Համո Բեկնազարյանը Դանիել Դզնունու հետ մեծ ջանքեր է գործադրում, որ Հայաստանում կինոն արմատավորվի՝ բոլոր հարակից ոլորտներով հանդերձ, եւ հատկապես կինոպլակատները զարգանան: «Հայֆիլմը» սկսեց թողարկել բարձրարժեք կինոնկարներ, որոնք մեծ հաջողություն ունեցան ողջ խորհրդային երկրում եւ խթանեցին Հայաստանում կինոթատրոնների կառուցումը: Իսկ կինոպլակատներ պատրաստվել են ինչպես հայկական, այնպես էլ ռուսական եւ եվրոպական ֆիլմերի համար, որոնք ցուցադրվել են Խորհրդային Հայաստանում:

Խորհրդային կարգերի հաստատումով հայ նկարիչները միավորվեցին «Արմենետ» կազմակերպությունում, որը զբաղվում էր կոմերցիոն պլակատների պատրաստմամբ: Սովետական դիզայնում տիրապետողն արդյունաբերականությունն ու կոնստրուկտիվիզմն էին: Ինչպես մշակույթի եւ արվեստի մյուս ճյուղերը, կինոպլակատներն էլ ունեին գաղափարական հստակ ուղղվածություն եւ քարոզչական, դաստիարակչական նշանակություն: Շատ բաներ վերցվում էին ընդհանուր սովետական-ռուսական միջավայրից, իսկ այնտեղ տիրապետողն ավանգարդիստական գործերն էին, որոնց վարպետները կարծում էին, որ ավանդական գեղանկարչությունը սովետների երկրում արդեն սպառել է իրեն ու չի կարող կիրառվել սովետական կարիքների բավարարման համար: Բեկնազարյանն ու Դզնունին փորձում էին համադրել սրա հետ հայկական յուրահատկությունը, որ Հայաստանի դրոշմը ճանաչելի լինի բոլորի կողմից: Ու դա միշտ չէ, որ ընկալվում էր: Սակայն նրանք պայքարում էին ու նաեւ ներգրավում երիտասարդ նկարիչներին, գրաֆիկայի մասնագետներին:

ԿԳՄՍ նախարարությունը մրցույթ է հայտարարել «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար

ԿԳՄՍ նախարարությունը մրցույթ է հայտարարել «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար: Մրցույթը տեղի կունենա 2026 թ. մարտի 31-ին: Հիշեցնենք, որ ամիսներ առաջ ԿԳՄՍ նախարարն աշխատանքից ազատել էր Գորիսի նախկին պետական քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանին, ինչը մեծ աղմուկ էր բարձրացրել. քոլեջում անգամ գործադուլ հայտարարվեց, աշխատակիցներն ազատման դիմումներ գրեցին եւ այլն: ԿԳՄՄՆ նպատակը երկու քոլեջները միացնելը եւ մի նոր՝ «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ ստեղծելն էր, իսկ տնօրենի պաշտոնակատար նշանակվեց նախարարի սրտի թեկնածուն՝ Արմինե Կոլյանը, որը ոստիկանների ուղեկցությամբ էր աշխատանքի գնում:

Նախկին տնօրեն Կարեն Լազարյանը նույնպես հայտ է ներկայացրել՝ մասնակցելու քոլեջի տնօրենի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին, իսկ ներկայիս տնօրենի պաշտոնակատար Արմինե Կոլյանը խոչընդոտում է տնօրենի թափուր հաստիքի համար անցկացվող մրցույթին նրա մասնակցությանը: **Կարեն Լազարյանը** մեզ հետ զրույցում ասաց, որ Արմինե Կոլյանն իրեն չի տրամադրում համապատասխան փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են ինգամյա զարգացման ծրագիր կազմելու համար, քանի որ կառավարության 2014 թ. դեկտեմբերի 25-ի № 1494-Ն որոշմամբ հաստատված՝ տնօրենի ընտրության կարգի 12-րդ կետի համաձայն՝ հաստատության տնօրենի ընտրության համար անցկացվող մրցույթին մասնակցելու պարտադիր պայմաններից մեկն էլ «Տվյալ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը» ներկայացնելն է:

«Մարտի 9-ին դիմել եմ «Գորիսի բազմագործառութային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար Արմինե Կոլյանին, պահանջելով մի քանի տեղեկություն՝ հաստատության 5 տարվա զարգացման ծրագիրը կազմելու համար: Պաշտոնակատարը, ինչպեսեւ սպասվում էր, հանկարծակիի է եկել եւ տարբեր մարդկանց հետ հեռախոսով հապշտապ խորհրդակցելուց հետո մերժել է իմ օրինական պահանջը: Գրավոր դիմում եմ հղել կառավարման նորաստեղծ խորհրդի նախագահ Անդրանիկ Բուդաղյանին եւ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանին՝ խնդրելով կարգի հրավիրել պաշտոնակատարին եւ ինձ տրամադրել պահանջվող փաստաթղթերը: Կառավարման խորհրդի նախագահի արձագանքը դեռեւս չեմ ստացել: Սակայն, ի պատասխան Ժաննային հղած դիմումի, փոխնախարար Արաքսիա Սվաջյանն անհեթեթ ու տարօրինակ պատասխան է տվել, թե բարձրացրած խնդրին ԿԳՄՍ նախարարությունը կանդրադառնա մինչեւ ս.թ. մարտի 30-ը: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ է կատարվում, մրցույթի համար փաստաթղթերը ներկայացնելու վերջնաժամկետը մարտի 20-ն է, մրցույթը կայանալու է մարտի 31-ին, իսկ նախարարությունն ինձ կպատասխանի մարտի 30-ին»,- մեզ հետ զրույցում ասաց Կարեն Լազարյանը:

Ըստ մեր զրուցակցի՝ նորաստեղծ քոլեջի կառավարման խորհրդի կազմն էլ են ապօրինի ձեւավորել: Գորիսի բազմագործառութային պետական քոլեջի կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի կազմը բաղկացած է 11 հոգուց: Կառավարման խորհուրդը պետք է ձեւավորվի ըստ «Նախնական մասնագիտական (արհեստագործական) եւ միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության խորհրդի ձեւավորման» կարգի, սակայն ԿԳՄՍ նախարարը 2026 թ. փետրվարի 19-ին ստորագրել է հրաման՝ հաստատել քոլեջի կառավարման խորհրդի կազմը. «Ուսումնական հաստատության խորհրդի ձեւավորման կարգի 3-րդ կետի համաձայն, խորհուրդը ձեւավորվում է միայն ու միայն հաստատության մանկավարժական կազմի, ուսանողության եւ պետական այլ մարմինների կողմից առաջադրված թեկնածուներից: Կարգի 14-րդ կետի համաձայն՝ խորհրդի անդամի թեկնածուները պետք է առաջադրված լինեին նախարարի հրամանով՝ առնվազն 5 աշխատանքային օր առաջ: Մինչդեռ, փետրվարի 19-ին՝ հրամանը ստորագրելու ժամանակ, նախարարը չի ունեցել գործող կարգի համաձայն առաջադրված թեկնածուներ ո՛չ հաստատության մանկավարժական կազմից, ո՛չ ուսանողությունից: Եվ չունենալով օրինականորեն առաջադրված թեկնածուներ, նախարարը, իբրեւ դասախոսական կազմի ներկայացուցիչներ, խորհրդի անդամ է նշանակել Անժելա Առաքելյանին ու Հայկուշ Էլյազյանին: Իսկ մանկավարժական կազմից խորհրդի անդամության թեկնածուները նորանշանակ տնօրենի ԺՊ-ի կողմից նշանակվել են փետրվարի 20-ին, այսինքն՝ նախարարի հրամանից մեկ օր հետո, 5 օր առաջ ներկայացնելու փոխարեն:

ԳՈՐԻՍ

ԿԵՂԾԻՔՆԵՐՈՎ ՈՒ ԱՊՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ՈՒՂԵԿՑՎՈՂ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Այս «գործընթացը» կազմակերպվել է ոչ թե թեկնածուներ առաջադրելու, այլ արդեն իսկ ստորագրված հրամանով նշանակված անդամների գոյությունն օրինականացնելու համար: Կեղծիքներով ու ապօրինություններով ուզում են առաջ գնալ: ԿԳՄՍ նախարարուհին կեղծ հավաստագրով տիկնոջն ամեն գնով ուզում է դարձնել նորաստեղծ քոլեջի տնօրեն: Մի քանի գործով դատական հայց ենք ներկայացրել ԿԳՄՍ նախարարության դեմ: Գորիսի պետական քոլեջի նախաձեռնող խումբն էլ է դիմել դատարան՝ պահանջելով պարտավորեցնել ԿԳՄՍ նախարարությանը՝ տրամադրել նորանշանակ տնօրենի հավաստագրման քննության արդյունքները»,- ասում է մեր զրուցակիցը:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

«ՍԵՎ ԵՌԱՆԿՅՈՒՆ». ՊԱՏՄԱԿԱՆ ԴԵՏԵԿՏԻՎ, ՈՐՆ ԱՐԺԵ ԴԻՏԵԼ

Սովետական ժամանակների «Սեւ եռանկյուն» եռամաս կինոնկարը, որը նկարահանվել է ռեժիսոր Սերգեյ Տարասովի կողմից՝ 1981 թվականին, խորհրդային դետեկտիվ կինոնկարների շարքում ամենադիտարժան ժապավեններից է համարվում: Այն նկարահանվել է Յուրի Կլարովի համանուն վեպի հիման վրա եւ ունի պատմական իրական հենք: Համարվում է ուշ խորհրդային շրջանի պատմական դետեկտիվ ամենահետաքրքիր գործերից մեկը: Կինոնկարում վերականգնված է պատմական բարդ ժամանակաշրջանը, որն ընդգրկում է Սովետական Միության ձեւավորման առաջին փուլը՝ Հոկտեմբերյան հեղափոխությանը հետեւած առաջին ամիսները: Զուգահեռաբար՝ այն ավելի հետաքրքիր է դառնում քրեական հետաքննության զուգորդմամբ: Ֆիլմում նկարահանվել են Կոնստանտին Գրիգորեւը, Անատոլի Ռոմաշինը, Ժաննա Բոլոտովան, Օրգա Բարնետը, Լեոնիդ Կուլագինը, Ալեքսեյ Միրոնովը եւ այլք:

Սյուժեի հիմքում իրական դեպքեր են՝ 1918 թվականին Մոսկվայի Կրեմլի Պատրիարքական ավանդատան կողոպուտը: Հետաքննությունը վարում է նորաստեղծ սովետական ոստիկանությունը՝ կոմիսար Կոսաչեւի գլխավորությամբ: Հետաքննության ընթացքում իրավապահները ստիպված են լինելու բախվել քրեական ընդհատակին, որն ակտիվացել էր հեղաշրջումից եւ հայտարարված համաներումից հետո: Գործողությունների թատերաբեմը հետհեղափոխական Մոսկվան է: Ֆիլմը հետաքրքիր է դիտել մի քանի առումով: Նախ, որ պահպանում է խորհրդային պատմական կինոժանրի ավանդույթները՝ մեծ ուշադրություն է հատկացված միջավայրի եւ կերպարների վերարտադրմանն ու կերտմանը՝ կոստյումներ, ժամանակաշրջանի եւ միջավայրի դետալներ, ինտերիեր, քաղաքային լանդշաֆտ: Բացի այդ, այն ժանրային սինթեզ է՝ հատուկ սովետական կինոյին: Մի կողմից, դասական քրեական սյուժե՝ հանցագործության քննություն եւ հանցագործների բացահայտում ու վնասազերծում, մյուս կողմից՝ քաղաքական եւ սոցիալական ժամանակի պրոցեսների վերարտադրություն, կերպարների միջոցով պետական գաղափարական եւ քարոզչական թեզերի տարածում, ինչպես, օրինակ, սովետական ոստիկանի կերպարի ձեւավորում: Բացի այդ, այն ցույց է տալիս ուշսովետական շրջանի հետաքրքրության աճը 1917 թվականի Հոկտեմբերյան հեղափոխության եւ քաղաքացիական պատերազմի նկատմամբ: 1970-80-ական թվականներին սովետական կինոարվեստն ակտիվորեն անդրադարձել է քննարկվող ժամանակաշրջանին, փորձել այն վերաիմաստավորել ու վերարժեւորել, եւ այդ առումով «Սեւ եռանկյունն» էլ, օրինակ, կարելի է հետհեղափոխական քաոսի եւ այդ քաոսից կարգուկանոնի ձեւավորման մասին մտորումների կինոմեկնաբանություն համարել:

Նյութերը՝ Նարեկ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՍԱՅՈՒՌՔԸ ԳԱԼԻՍ Է ԿԱՐՈՏՈՎ, ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ Է ԿԱՍԿԱԾՈՎ

Իշխանական ստատիստիկան վկայում է, որ մեր երկիրը վերածվել է տարածաշրջանի զբոսաշրջային կենտրոնի՝ զբոսաշրջիկների հոսքը տարեցտարի աճում է, աշխարհի ամենատարբեր անկյուններից մարդիկ գալիս են Հայաստան՝ մեր երկիրը «մագնիսի պես ձգում» է զբոսաշրջիկներին: Բայց

տարի է՝ Ֆրանսիայի քաղաքացիներ են, որոշել էին իրենց արձակուրդը Հայաստանում անցկացնել: Պարզվեց՝ հայրենիքում նրանց սպասում էր բոլորովին այլ վերաբերմունք: Սահմանին հանկարծ «հայտնաբերել» էին, որ պարոն Կ.-ի փաստաթղթերում որպես ծննդավայր նշված է Գետաշեն գյուղը: Եվ ահա՝ այստեղ սկսվում է իսկական թատրոնը, քանի որ Գետաշենը գտնվում է Ադրբեջանի տարածքում: Այսինքն, մեր իշխանությունը Ադրբեջանի իշխանությունների հետ ջանջիգյար հարաբերությունների մեջ է, մեր քաղհասարակությունն օրումեջ Ադրբեջան է մեկնում, ադրբեջանցիներն են Հայաստան գալիս, իսկ Գետաշենում ծնված մարդուն կասկածում են, որ Ադրբեջանի լրտես է, գործակալ ու, ահա, ամիսներ շարունակ պարզում են, ստուգում, քննություն իրականացնում: Մի բան է մնում, որ մի օր էլ որոշեն այդ «վտանգավոր գործակալին» հանձնել եղբայրական Ադրբեջանի արդարադատությանը: Իսկ մարդը

առանց որեւէ վարդագույն ակնոցի էլ պարզ երեւում է մի բան, որ Հայաստան եկող «զբոսաշրջիկների» ճնշող մեծամասնությունը օտարերկրացիներ չեն՝ մեր հայրենակիցներն են՝ սփյուռքահայերը, որոնք գալիս են ոչ թե զբոսաշրջային հետաքրքրասիրությունից, այլ կարոտից մղված, ովքեր ուզում են տեսնել իրենց հայրենիքը, հարազատներին, վայելել հայրենի հողն ու ջուրը: Բայց հայրենիքն այնքան էլ գրկաբաց չի դիմավորում նրանց:

Առաջին ահազանգը ստացանք Ֆրանսիայից. Թուլուզ քաղաքից անցյալ տարվա դեկտեմբերին Հայաստան էին ժամանել պարոն Կ.-ն ու նրա կինը: Նրանք արդեն 5 շուրջ 18 տարի առաջ հեռացել է Հայաստանից, բայց ծննդավայրը մնացել է Գետաշենը: Դա, հավանաբար, նաեւ օգնել է, որ օտար երկրում հաստատվեն՝ աշխատանք գտնեն, նաեւ՝ քաղաքացիություն ստանան: Եվ այդպիսի կարգավիճակ ունեցող մեր հայրենակիցները քիչ չեն: Նրանք լավ կյանքից չեն վտարանդի դարձել. հեռացել են ցավով՝ չկարողանալով սեփական հայրենիքում արժանապատիվ կյանքով ապրել եւ չեն դադարել կարոտել իրենց հողը: Մինչեւ վերջերս նրանցից շատերը տարին մեկ կամ երկու անգամ գալիս էին Հայաստան: Հիմա, կարծես թե, այս ճանապարհն էլ է փակվում: Եվ սա միակ դեպքը չէ:

Ֆրանսիայի Նանտ քաղաքից չորս հայ ընտանիք այս տարի որոշել էր այցելել Հայաստան: Ուզում էին իրենց 6 երեխաներին մկրտել Սուրբ Էջմիածնում: Երեխաներին պիտի բերեին, մկրտեին այստեղ, ցույց տային հայրենիքը, ծանոթացնեին այն հողին, որի մասին տարիներով պատմել էին նրանց: Բայց այդ մտադրությունից հրաժարվեցին, երբ իմացան, որ Հայաստան մտնող յուրաքանչյուր անձի հարցաքննում են, կասկածում, տնտղում փաստաթղթերը, սկսում պարզել, թե ով է, որտեղից է, ինչու է եկել: Մարդիկ մտածեցին՝ իսկ եթե գանք, ու խնդիր առաջանա: Իսկ եթե երեխաների՞ հետ խնդիր ստեղծվի, ու եթե այլեւս հանգիստ վերադառնալ չկարողանա՞ն: Ու որոշեցին չգալ: Նման անպատասխանատու քայլով կարելի է ոչ միայն վիրավորել մարդկանց, այլեւ կամաց-կամաց քանդել հայրենիք-սփյուռք կապերը:

Ես երկար մտածում էի՝ ինչի՞ համար է այս ամենն արվում: Ի՞նչ նպատակ են հետապնդում մեր իշխանությունները: Մի՞թե չեն հասկանում, որ իրենց գործողություններով վախեցնում են նաեւ նրանց, ովքեր մշտապես գալիս էին Հայաստան, եւ դրանով նոսրացնում են զբոսաշրջիկների եւ արտարժույթի հոսքերը, որոնցով այդքան սիրում են պարծենալ իրենց հաշվետվություններում: Մի՞թե չեն տեսնում, որ իրենց ձեռքով սեպ են խրում Հայաստանի եւ սփյուռքի միջեւ: Այս առեղծվածը լուծեց հարեւանս, որը ՔՊ-ի ամենահավատարիմ երկրպագուներից է: Մի օր ձայն տվեց ետեւիցս.

- Հե՛յ, հարեւան, մի րոպե կանգնի… Էս ո՞նց տի ըլի, էրեխեքս ուզում էին էս տարի Հայաստան գալ, բայց հիմա վախենում են:

Նրա տղան տասնյոթ տարի առաջ ամուսնացել էր: Աշխատում էր ոստիկանությունում, կինը՝ բանկում: Երեխա ունեցան: Մի օր տղան հորն ասել էր. «Իմ ու կնոջս աշխատավարձը երեխայի պամպերսին էլ չի հերիքում: Ո՞նց ապրենք», ու ընտանիքով մեկնեցին Գերմանիա: Հիմա այնտեղ են ապրում, աշխատում են, քաղաքացիություն էլ ունեն: Պարզվում է՝ ցանկացել են այս տարի Հայաստան գալ, բայց երկմտել են, որովհետեւ որդին՝ հարեւանիս թոռը, շուտով 18 տարեկան է դառնում: Վախեցել են՝ հանկարծ Հայաստանում ինչ-որ մեկը որոշի, որ տղան պիտի այստեղ մնա, կամ ինչ-որ խնդիր առաջացնեն: Հիմա իշխանամետ հարեւանս ինձ հարցնում է. «Ասա, ի՞նչ անեմ»: Չգիտեի ինչ պատասխանել, որոշեցի կատակել. «Դու ՔՊ-ին հավատարիմ մարդ ես, դիմիր քո աստծուն՝ Նիկոլին: Եթե էս երկրում մի բան շտկող կա, ուրեմն նա է»: Հարեւանս վիրավորվեց. «Նիկոլին հի՞շտ է բռնեցնել»: Շատ հեշտ է. երբ գա Լոռի՝ ձայներ հավաքելու, կնոջդ ուղարկիր, թող կանգնի ճանապարհի եզրին՝ ծանր տոպրակներով, Նիկոլը կմոտենա, տոպրակները կվերցնի, կհասցնի ձեր տուն, դու էլ հարցերդ կտաս ու հարցը կկարգավորես: Հարեւանս մի պահ լուռ նայեց ու ասաց. «Այ, հենց էդպես եք արել, դրա համար էլ մեր Նիկոլը բոլորից նեղացած է… Ու դուք ուզում եք, որ նա մեզ ների ու սիրի՞»:

Այդ պահին ես վերջապես հասկացա գաղտնիքը՝ Նիկոլը չի սիրում մեզ, չի սիրում այստեղ ապրողներին, չի սիրում նաեւ դրսում ապրող մեր հայրենակիցներին: Եվ ամեն ինչ անում է, որ ոչ միայն Հայաստանում ապրողների կյանքը սոդոմ-գոմորի վերածի, այլեւ՝ սփյուռքում ապրողներինը:

Գագիկ ԱՆՏՈՆՅԱՆ

Ազատ խոսքի Ձեր հրապարակում կարող է տպագրվել Ձեր խոսքը: Գրեք մեզ, զանգեք մեզ
011 (55,94) 52 66 70, info@hraparak.am
Երեւան 0010, Մաշտոցի 4

ԿԱՐԴԱՑԵՔ ՀԱՁՈՐԴ ՀԱՄԱՐՈՒՄ

բաժանորդագրություն
Բաժանորդագրության համար դիմեք՝
Պրեսս Ստենդ՝ 093 88 68 01
Բլից մեդիա 52 53 01

Հրապարակ
Գլխավոր խմբագիր Արմինե Օհանյան
թողարկման պատասխանատու info@hraparak.am
Ստորագրված է տպագրության 13.03.2026թ., տպագրվել է «Գինդ» տպագրատանը: Տպաքանակը՝ 3000 օրինակ:

ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՂ ԾԱԽՍԵԼՈՒ ՏԵՂ ՉՈՒՆԻ՞. ՏԱՆԻՔՆԵՐՆ Է ՓՈԽՈՒՄ

Գյուլագարակ համայնքի վարչական ղեկավարը հայտարարություն է տարածել այն մասին, որ բնակելի տների եւ օժանդակ շինությունների տանիքներն ասբեստից են, կարող են դիմել գյուղապետարան՝ ներկայացնելով շինությունների մակերեսը, եւ դրանք կփոխվեն: Հայտարարությունից հետո չեն էլ սպասել, որ մարդիկ դիմեն, գյուղապետարանի աշխատողներն անձամբ են զանգում, հարցում անում եւ ցուցակագրում: Բայց գյուղացիներից շատերը հասկացել են, որ սա ոչ այլ ինչ է, քան ընտրակաշառք՝ ընտրություններին ձայն ստանալու նպատակով:

Մեր զրուցակիցը Լոռվա բնակիչ է: «Հոբարձի վարչական ղեկավար Իշխան Լալազարյանը զանգահարեց, ասեց, որ հաշվառում են անում՝ ասբեստի համար: Ճիշտ է՝ մենք տանիքի խնդիր ունեինք, բայց մեր տվյալները չտվեցինք: Պետությունը փող ծախսելու տեղ չունի՞, ընկել ա՝ գյուղերի օժանդակ շինությունների տանիքներն ա փոխում: Հասկացանք, որ քաղաքական առումով են օգտագործելու, եւ ոչ մի օժանդակություն էլ չի լինելու: Եթե օգնող էին, թող ժամանակին օգնեին: Անցած տարի կարկուտի հետեւանքով գյուղատնտեսության ոլորտում բավականին վնաս կրեցի: Այդ ժամանակ ասում էին, որ փոխհատուցելու են վնասը: Անգամ էկոնոմիկայի նախարարություն նամակ ուղարկեցի, բայց ոչ մի փոխհատուցում էլ չտվեցին»,- ասաց նա:

Հոբարձի բնակավայրի վարչական ղեկավար **Իշխան Լալազարյանից** հետաքրքրվեցինք, թե քանի բնակիչ է ցուցակագրվել: «Ի՞նչ իմանամ՝ դու ով ես, ինչի համար ես զանգել, որ ես քո հարցին պատասխանեմ: Մոտեցի, հարցը տուր, պատասխանը կստանաս»,- ասաց նա ու անջատեց հեռախոսը:

Կուրթան բնակավայրի վարչական ղեկավար **Աբգար Մագթաղյանը** մեր հարցին, թե քանի ընտանիք է ցուցակագրվել տան եւ օժանդակ շինությունների տանիքները փոխելու համար, եւ երբ բնակիչներին կտրամադրվի օգնությունը, ասաց. «Այս պահին թիվը չեմ հիշում: Բայց դա օգնությո՞ւն է, դա օգնություն չի, ընդամենը գրություն էր եկել, որին պետք է պատասխանեի, իսկ դրա շարունակությանը տեղյակ չեմ, թե ինչ ա»: Եթե ցուցակագրում են, ուրեմն ինչ-որ աջակցություն պետք է տան, Ձեզ չի՞ հետաքրքրում, թե ինչի համար եք ցուցակագրում մարդկանց: «Հետաքրքրում է, բայց հիմա Դուք ինձ արդեն ուրիշ հարց եք տալիս, հիմա Ձեզ ցուցակագրվածների թի՞վն ա հետաքրքրում, թե՞ ինչու ենք ցուցակագրում»:

Գարգառ բնակավայրի վարչական ղեկավար **Գոռ Աղաջանյանն** էլ ասաց. «Բայց այդ տվյալները Ձեզ ինչի՞ համար պետք է տամ, շատ կներեք, մենք հասկանում ենք այդ պրոբլեմները, փորձում ենք լուծել»: Բնակիչներն ասում են, որ օգնություն եք տալիս, ասբեստե տանիքը թիթեղով եք փոխարինում: «Շատ մարդկանց են էդպես մանիպուլացնում, բայց էդպես բան չկա: Բա չիմանա՞նք՝ մեր գյուղում քանի տանիք ունենք ժեշտից, քանիսը՝ կղմինդրից, քանիսը՝ ասբեստից»: Իսկ դա ի՞նչ կտա գյուղացուն: «Մնացածը մենք կմտածենք, կորոշենք՝ ինչ կտա գյուղացուն»:

Նելլի ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Հրապարակ օրաթերթ» ՍՊԸ, Պետ. գրանցման վկայական՝ 03Ա 082118 տրված 09.09.08
Երեւան 0010, Մաշտոցի 4, հեռ. 52 66 70, info@hraparak.am